

## ԱՇԽԱՐՀԱՑՐԻ ԶԱՅՈՒԹԻՒՆԸ ՆՇԵՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 95-ԱՄԵԱԿԸ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՍ ԸԼԼԱԼՈՎ ԶՈՐԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄ ԻՍԹԱՆՊՈՒԼԻ ՄԵՋ ՆԱԽԱԳԱՅ ՕՊԱՄԱ.- «ՄԵԾ ԵՂԵՌՆԸ ԶԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՄԵՐԻՉ ԷՋՆ Է»



Հնչակեան Կուսակցութեան թափօրը մօտենայ Ծիծեռնակաբերդի յուշահամալիր



Լիբանոնի բանաձայնաբեկութեան քայլարշարը 60 հազար հոգիներու մասնակցութեամբ



Լոս Անճելըսի Հայութիւնը համախմբուած Մոնթեպելլոյի Նդեռնի յուշարձանին շուրջ



Թուրքիա արապահպաններու ցոյցը Իսթանպուլի մէջ

Ապրիլ 24-ին Հայ ժողովուրդը ամէնուրեք նշեց ցեղասպանութեան զոհ՝ իր 1.5 միլիոն նահատակներու 95-րդ տարելիցը: Երեւանէն Պէյրութ, Լոս Անճելըսէն Մոնթեպելլոյի հայութեան հետ այդ օրը սգացին նաեւ օտար քաղաքական դէմքեր ու մտաւորականներ: Առաջին անգամ ըլլալով թուրք մտաւորականներ հրապարակային ցոյցերով պահանջեցին իրենց կառավարութենէն՝ ճանչնալ Ցեղասպանութիւնը եւ ներողութիւն խնդրել Հայ ժողովուրդէն: Միացեալ Նահանգներու նախագահը դարձեալ հանդէս եկաւ ուղերձով ու թէեւ ան չօգտագործեց «ցեղասպանութիւն» բառը, սակայն յայտարարեց որ, Մեծ եղեռնը Հայ ժողովուրդի պատմութեան ամեմաավերիչ էջն է:

**ԵՐԵՒԱՆ**

Հակառակ տեղատարափ անձրեւին, առաւօտեան կանուխ դէպի Ծիծեռնակաբերդի յուշահամալիր

տանող ճանապարհը արդէն բազմամարդ էր: Լուռ շարքերով հայաստանցիներ, արցախահայեր, Հայաստան ժամանած սփռւեալներ, օտարերկրեացիներ կը քալէին դէպի Ծիծեռնակաբերդի յուշահամալիր՝ յարգանքի տուրք մատուցելու նահատակներու յիշատակին:

Կէսօրուայ մօտ յուշահամալիր այցելեցին Հայաստանի քաղաքական եւ կրօնական վերնախաւը, Սերժ Սարգսեանի եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին երկրորդի գլխաւորութեամբ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխաւորութեամբ հոգեհանգստեան արարողութիւն կատարուեցաւ ցեղասպանութեան զոհերու յիշատակին:

Յատուկ այս առիթով Երեւան ժամանած էր եւ Ծիծեռնակաբերդի յուշահամալիրի մօտ յարգանքի տուրք մատուցեց Հարաւային Կովկասի վատիկանի դեսպան Արքեպիսկոպոս Կլաւդիոս Գուշերտտին: «Ազատութիւն» ռատիոկայանին տուած հարցազրոյցի ընթացքին վատիկանի դեսպանը շեշտեց, որ Հայ ժողովուրդը պէտք է հրաժարի իր իրաւունքներէն եւ պատմական յիշողութենէն, որովհետեւ յիշողութեան մերժումը կը նշանակէ քաղաքակրթութեան վերջ, ինչ որ անընդունելի է:

Արքեպիսկոպոս Գուշերտտին ողջունեց հայ-թրքական հաշտեցման նպատակով սկսած գործընթացը:

Հայաստանի մօտ հաւատարմագրուած շարք մը երկիրներու դեսպաններուն հետ ցեղասպանութեան զոհերու յիշատակը յարգելու նպատակով Ծիծեռնակաբերդ եկած էր նաեւ Իտալիոյ դեսպան Պրուևո Սկապինի:

Ծիծեռնակաբերդ այցելեցին նաեւ թուրք լրագրողներ: «Հապարկութուրք» լրատուամիջոցի թղթակից Ասլը Սյոզբիլի, պա-

տասխանելով «Ազատութիւն» ռատիոկայանի հարցերուն, ըսաւ. - «Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ յարաբերութիւնները պէտք է կարգաւորուին: 2000-ականներուն փակ սահմաններ չեն կրնար ըլլալ, եւ այդ բոլորը կը հասկնան, բայց կան դիւանագիտական խնդիրներ»:

Առանձին թափօրով Ծիծեռնակաբերդի յուշահամալիր այցելեց Ս.Գ.Հնչակեան Կուսակցութեան դեկավարութիւնը: Կուսակցութեան դրօշներ պարզած երիտասարդներու առջեւ կը գալէին ՄԻՀԿ Կեդրոնական վարչութեան ատենապետ Սեդրակ Աճէմեան, Հայաստանի վարիչ Մարմինի ատենապետ Գէորգ Բերկուբեկեան եւ Ազգային ժողովի պատգամաւոր վարդան Խաչատրեան:

Ծիծեռնակաբերդ այցելեց նաեւ Հայ Ազգային Գոնկրէսի առաջնորդ, ՀՀ առաջին նախագահ Լեւոն Մարք էջ 5

**ԱԶԳԱՅԻՆ**

**ՕՐՈՒԱՆ ԸԱՐՑԵՐՈՒՆ ԸԵՏ**

**ԱՊՐԻԼ 24-ԵԱՆ ԵՐԵՒՈՅԹՆԵՐ**

Այս օրերուն հայկական մամուլի էջերը ողորդում են Հայկական Ֆեդերատիվացիան 95 ամենակի հետ կապուած իրադարձութիւններու լուսաբանմամբ եւ Հայ-թրքական յարաբերութիւններու գծով արձանագրուած նոր զարգացումներով:

Հայաստանի գործող նախագահ Սերժ Սարգսեանի կատարած անակնկալ յայտարարութիւնը՝ հայ-թրքական երկու Արձանագրութիւններու ընթացակարգը կասեցնելու կապակցութեամբ, այդ եւս դարձաւ ապրիլեան իրադարձութիւններու մէկ մասը: Ապրիլ 24-ի նախօրեակին հրապարակուած այս որոշումը, առաջին հայեացքով, հայութեան բոլոր խաւերուն կողմէ արժանացաւ խանդավառ ընդունելութեան եւ գնահատանքի: Շատեր խորհեցան թէ, Սարգսեանի այս որոշումով, Հայաստան վերջ կը դնէ «Ֆուլթոյային դիւանագիտութեան» հետեւանքներուն: Սակայն, շատ չանցած ի յայտ եկաւ որ, Հայաստանի նախագահի առած քայլը եւ թուականի ընտրութիւնը սերտօրէն առնչուած էին իրար հետ: Տարիէ մը ի վեր, ամբողջ հայութիւնը՝ Հայաստանի եւ սփիւռքի մէջ կ'արտայայտէր իր ընդվզումը եւ մտահոգութիւն կը յայտնէր հայ-թրքական Արձանագրութիւններուն տակ թագնուած վտանգներուն առնչութեամբ: Հայաստանի իշխանութիւնները քաջ գիտակցելով, որ հանրային կարծիքը իր մեծամասնութեամբ դէմ է Արձանագրութիւններուն, դիմեցին ձեւական այս քայլին, աժան ժողովրդականութիւն ձեռք ձգելու նպատակով:

Արձանագրութիւններու ստորագրումէն ետք Հայաստան միշտ ալ յայտարարած էր որ, վաւերացումը նախ պէտք է կատարուի թրքական խորհրդարանին կողմէ, որմէ ետք միայն Հայաստանի խորհրդարանը պիտի վաւերացնէ զանոնք: Սակայն, որոշ ժամանակ ետք Արձանագրութիւնները ներկայացուցան Հայաստանի Ազգային ժողով:

Սերժ Սարգսեանի վերջին որոշումը կը վերաբերի միայն այն մասին, որ արձանագրութիւնները դուրս պիտի գան Ազգային ժողովի օրակարգէն: Այսպիսով, վերադարձ կը կատարուի նախկին վիճակին: Այսինքն, եթէ վաղը թուրքի վաւերացնէ զանոնք, Հայաստան եւ պիտի չունանայ նոյնը ընելու: Այս էր պատճառը, որ Միացեալ Նահանգները եւ Ֆրանսան անմիջապէս ողջունեցին Սերժ Սարգսեանի ելոյթը, քանի որ ոչ մէկ էական փոփոխութիւն կար Հայաստան դիրքորոշման մէջ: Թուրքիոյ հակազդեցութիւնը եւս մեղմ էր: Իրեն համար կարեւորը այս Ապրիլ 24-ը եւս անցնել էր, որմէ ետք, դժուար պիտի չըլլար Հայաստանի հետ նախկին կէտին վերադառնալը ու իր նախապայմանները հետապնդելը:

Ապրիլ 24-ի հետ կապուած Հայութեան ուշադրութիւնը կեդրոնացած էր նաեւ Սպիտակ Տան վրայ, սպասելով նախագահ Պարաք Օպամայի տարեկան ուղերձին: Թէեւ բոլորը վստահ էին, որ Միացել նահանգներու նախագահը դարձեալ պիտի խոստարի «ցեղասպանութիւն» բառը օգտագործելէ, այսուհանդերձ կը սպասէին տեսնելու, թէ ինչպիսի բովանդակութեամբ յայտարարութիւն մը

դուրս պիտի գայ Ուաշինգթոնէն:

Հակառակ մեր յուսարարութեան, պէտք է արձանագրել որ Օպամա իր խօսքին մէջ բաւական յստակ բառերով նկարագրեց 1915 թուականին հայութեան հետ պատահածը: Խօսելով ամենադժան դազանութիւններու, մէկուկէս միլիոն հայերու սպանութեան եւ գողթի ճանապարհի մասին, Օպամա այս բոլորը նկատեց «Մեծ Եղեռն»: Այս եզրը, թէեւ ոչ օտարներուն, սակայն մեզի համար համագոր է «ցեղասպանութիւն» բառին:

Թուրքիոյ մէջ, ուր ցարդ միայն «ցեղասպանութիւն» բառին հետ պայմանաւորուած կը մնար ամէն ինչ, արդէն իսկ սկսած են անդրադառնալ, որ Օպամայի խօսքը տարուէ-տարի կը դառնայ աւելի կտրուկ եւ իրենք, այդքան ալ գոհունակութիւն զգալու պէտք չունին եւ պատմութիւնը կը շարունակուի գրուիլ՝ Հայոց Ցեղասպանութեան իրողութեան մասին:

Լիբանանահայութիւնը այս տարի եւս միանական ուժերով նշեց Եղեռնի տարելիցը: 60 հազար ցուցարարներ քայլարշաւ կատարեցին Կիլիկիոյ կաթողիկոսարանէն դէպի Պուրճ Համուտի մարզադաշտը, ուր տեղի ունեցաւ քաղաքական հաւաք: Այսուհանդերձ, Լիբանանահայութիւնը ապրեցաւ մեծ հիասթափութիւն մը: Երկար տարիներու սովորութիւնները խախտելով, երկրի երեք բարձրագոյն ղեկավարները՝ Հանրապետութեան նախագահը, Խորհրդարանի նախագահը եւ վարչապետը իրենց ներկայացուցիչները չէին ուղարկած ոչ կաթողիկոսարանէն ներս տեղի ունեցած կրօնական արարողութեան եւ ոչ ալ քաղաքական հաւաքին: Այս քայլին դիմուած էր չվշտացնելու համար թրքական կառավարութիւնը, որ վերջին տարիներուն սկսած է իր ազդեցութիւնը տարածել շատ մը արաբական պետութիւններու վրայ, ներառեալ Լիբանանի:

Երկրէ մը ներս, ուր կառավարութեան մէջ կան երկու հայ նախարարներ եւ Խորհրդարանէն ներս կան վեց երեսփոխաններ, նման երեւոյթի մը առջեւ գտնուիլը մեծ հարուած էր լիբանանահայութեան համար:

Ապրիլ 24-ի հետ կապուած կարեւորագոյն իրադարձութիւններէն մէկը արձանագրուեցաւ թուրքիոյ մէջ, ուր առաջին անգամ ըլլալով տեղի ունեցաւ հրապարակային միջոցառում: Իսրայէլի «Թաքսիմ» հրապարակին վրայ թուրք իրաւապաշտպաններու կողմէ կազմակերպուած եւ 1915-ի գոհերու յիշատակին նուիրուած ցուցի մը ընթացքին պարզուեցան Եղեռնի գոհ՝ հայ մտաւորականներու նկարները: Իսկ ելոյթ ունեցող իրաւապաշտպաններ եկան յայտարարելու՝ «Այդ ցաւը մեր ցաւն է: Այդ սուգը՝ բոլորին»:

Թուրքիոյ մէջ Հայկական Ցեղասպանութեան իրողութեան մասին նեղ շրջանակներու մէջ նախ սկսան խօսիլ գրողներ ու մտաւորականներ, այժմ մարդկային իրաւունքներու պաշտպաններ նոյնը կ'ընեն աւելի բարձրաձայն ու հրապարակաւ: Կասկած չկայ, որ վաղը նոյնը պիտի ընէ թուրք հասարակութիւնը: Մնացեալը պարզապէս ժամանակի հարց է:

**ՅԱԿՈՒԲԱԴԱԼԵԱՆ**

Ամէն Ապրիլի 24-ին ԱՄՆ նախագահների հերթական ուղերձի սպասումը, որ առաջանում է համայն հայութեան մօտ, մի կողմից թէ վիճակախաղ է յիշեցնում, թէ յայտնի անեկղոտ փոսն ընկած մարդը դուրս գալու հերթական անյաջող փորձից յետոյ ասում է «մի անգամ էլ եմ փորձում, եթէ դուրս չեկայ, գնում եմ տուն»:

Ապրիլի 24-ին ԱՄՆ նախագահների ուղերձի «համահայկական» սպասումը յիշեցնում է հենց փոսից դուրս գալու անյաջող փորձեր, ու ամէն անգամ հայ ժողովուրդը, հայութիւնը, «տուն գնալու» փոխարէն կատարում է հերթական «փորձը»:

Սպասումները յատկապէս սրուեցին Պարաք Օպամայի նախագահութեան տարիներին: Յատկապէս ամերիկահայ կազմակերպութիւններին թուում էր, թէ հենց Օպաման է, որ կը կատարէ նախընտրական խոստումը եւ կը ճանաչի ցեղասպանութիւնը: Մինչ այդ, վերջին տարիներին ԱՄՆ գրեթէ բոլոր նախագահներն էլ ընտրուելուց առաջ հայկական համայնքին խոստացել են ճանաչել ցեղասպանութիւնը, բայց յետոյ չեն կատարել խոստումը:

Թէ ինչու պիտի Օպաման կատարէր, հայկական համայնքը որեւէ ռացիոնալ բացատրութիւն այդպէս էլ չտուեց: Պարզապէս հաւատում էին, ինչպէս որ Օպամային, իհարկէ բոլորովին այլ հարցերի կապակցութեամբ, հաւատում էին միլիոնաւոր, տասնեակ միլիոնաւոր ամերիկացիներ: Ասում են, թէ նրանց մի մասը սկսել է հիասթափուել: Կասկած չկայ, որ հիասթափուել սկսել են նաեւ հայերը՝ թէ Ամերիկայում, թէ համայն աշխարհում: Պարաք Օպաման իր նախագահութեան ընթացքում երկրորդ անգամ ուղերձ լղելով Ապրիլի 24-ի կապակցութեամբ, ոչ մի անգամ չօգտագործեց «ցեղասպանութիւն» բառն ու բաւարարուեց «Մեծ Եղեռն»-ով:

Ինչպիսի անարդարութիւն՝ կասի թերեւս իւրաքանչիւր հայ, կամ հայերի մեծ մասը: Բայց թուում է, թէ ինչ որ մի Ապրիլի 24-ից յետոյ, հայերը, կամ հայերի մեծ մասը պէտք է որ սկսեն ինչ որ այլ բան ասել, եւ գուցէ ոչ թէ բարձրաձայն, այլ իրենք իրենց համար: Այլ բան ասեն, որ յետոյ նաեւ այլ բան ասեն, փոսից դուրս գալու «անեկղոտային» հերթական փորձի փոխարէն: Ու թուում է, թէ այս անգամ հայերին դա կարծես թէ յուշում է նաեւ հենց Օպաման.

«Անգամ երբ մենք բախում ենք 1915թ. դաժանութեան հետ, մեզ ողբնչում է հայ ժողովրդի զարմանալի ոգին: Թէեւ ոչ ոք չի կարող վերադարձնել Մեծ Եղեռնի ժամանակ գոհուածներին, այն համաշխարհային աւանդը, որ ներդրել են հայերը վերջին 95 տարում, հայ ժողովրդի ուժի, տոկունութեան եւ տղամարդկութեան առհաւատչեան է: Հայ ժողովրդի անսանձելի ոգին ամրապնդեց յաղթանակը նրանց նկատմամբ, ովքեր մտադրուել էին ոչնչացնել իրեն»:

Ինչի մասին է խօսում Օպամայի ուղերձի այդ հատուածը: Շատերը կ'ասեն, թէ Օպաման պարզապէս փորձում է այսօրինակ բաւերով խոսանալ, մանեւրել, արդարանալ, այսպէս ասած «կուտտիտ» լինել: Գուցէ: Բայց ամէն

ինչ թերեւս կախուած է նրանից, թէ ով ինչպէս կ'ընկալի որեւէ մէկի, տուեալ դէպքում՝ ԱՄՆ նախագահ Օպամայի խօսքը:

Օրինակ, ես այն ընկալում եմ որպէս յուշում, թէ որն է ճանապարհը, որն է ցեղասպանողների հանդէպ յաղթանակի ճանապարհը: Այդ ճանապարհն այն չէ, թէ աշխարհում քանի նախագահ կ'օգտագործի ցեղասպանութիւն բառը, կամ քանի խորհրդարան կ'ընդունի ցեղասպանութեան մասին օրէնքի նախագիծ: Դա այդ երկրների գործն է, այդ երկրների շահը, ու որեւէ մէկը յանուն արդարութեան չէ, որ դա անելու է: Հետեւաբար, դա պէտք է թողնել նրանց: Ցեղասպանութեան ճանաչման, արդարութեան հասնելու հարցում անելու գործ ունեն հայերը: Ու այդ գործն ամենեւին ամէն տարի Ապրիլի 23-ին սրտատրոփ սպասելն ու Ապրիլի 25-ին ասենք ԱՄՆ նախագահներին հայցոյելը չէ:

Այդ գործը ապրելն է, Օպամայի ասած «համաշխարհային աւանդ» ունենալն է, աշխարհի կեանքում դեր ու նշանակութիւն ունեցող պետութիւն, արդիական, մրցունակ պետութիւն դառնալն է, որտեղ փողոցներում ցուցարարներ չեն սպանում, որտեղ ոստիկանութիւնում «վկաներ» կամ «կասկածեալներ» չեն սպանում, որտեղ երկրի իրաւական, նիւթական, քաղաքական ռեսուրսները կենտրոնացած չեն ընդամէնը մի խումբ մարդկանց ձեռքին: Այ դա է թերեւս

Շաբ.ը էջ 4

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**  
 ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ ՆԱԶԱԿԵԱՆ  
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
 Արեւմտեան Ամերիկայի Մրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝  
 ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ  
 ԳԱՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ  
 ՍԱՐԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ  
 ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ  
 ԼԵՆԱ ՍԱՆՈՒԿԵԱՆ  
 Դեռ. (626) 797-7680  
 Ֆաքս. (626) 797-6863  
 E-Mail: massis2@earthlink.net  
 http://www.massisweekly.com

**MASSIS Weekly**  
 Organ of the Armenian Social  
 Democratic Hunchakian Party  
 of Western USA  
 1060 N. Allen Ave.  
 Pasadena, CA 91104  
 Phone: (626) 797-7680  
 Fax: (626) 797-6863  
 (USPS 667-310) (ISSN 0744-334X)  
 Published Weekly  
 Except Two Weeks in August

**ANNUAL SUBSCRIPTION RATES:**  
 USA \$50.00, Canada \$60 (Second  
 Class), \$75.00 (Air Mail)  
 Overseas \$85.00 (2nd Class Mail),  
 \$125.00 (Air Mail).  
 All payments must be made in  
 US funds & Drawn on US banks.  
 Periodicals Postage Paid  
 at Pasadena CA.

Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**  
 1060 N. Allen Ave.  
 Pasadena, CA 91104

ՀԱՅԱՍՏԱՆ

ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԸ ԱՏՈՐԱԳՐԵԼ Է ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՎԱԲԵՐԱՑՈՒՄԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՅՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Սերժ Սարգսեանը Ապրիլ 22-ին ստորագրել է հրամանագիր «Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ դիւանագիտական յարաբերութիւններ հաստատելու մասին» եւ «Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ յարաբերութիւնների գարգացման մասին» արձանագրութիւնների վաւերացման ընթացակարգը կասեցնելու մասին:

Արձանագրութիւնների վաւերացման ընթացակարգը, ըստ հրամանագրի կասեցում է՝ «հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան 55-րդ յօդուածի 7-րդ կէտը, դեկաւարուելով «Միջազգային պայմանագրերի մասին» Հայաստանի Հանրապետութեան օրէնքի 39.1-րդ յօդուածի 1-ին մասով եւ հաշուի առնելով Հայաստանի Հանրապետութեան Ազգային ժողովում քաղաքական կոալիցիա կազմած կու-

սակցութիւնների քաղաքական խորհուրդների 2010 թուականի Ապրիլի 22-ի համատեղ յայտարարութիւնը»:

Հրամանագրի երկրորդ կէտով Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործերի նախարարին յանձնարարուած է արձանագրութիւնները վաւերացման ընթացակարգը կասեցնելու մասին ծանուցել Թուրքիայի Հանրապետութեանը:

Ապրիլի 26-ին Հայաստանի Ազգային ժողովի նիստում «Ժառանգութիւն» խմբակցութեան անդամ Արմէն Մարտիրոսեանը հարցրել է, թէ արդե՞ք հայ-թուրքական արձանագրութիւնները հանուել են Աժ մեծ օրակարգից, ինչին ի պատասխան Աժ խօսնակ Յովիկ Աբրահամեանը պատասխանել է, որ արձանագրութիւնները հանուել են միայն քառօրեայ օրակարգից, իսկ խորհրդարանի մեծ օրակարգում դեռ մնում են:

ԱՄԵՆԱՅՆ ՅԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԱՂՕԹՔ Է ԱՍԵԼ ԲԱՔՈՒԻ ՅԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ



Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ. եւ Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւ Պաթուի մէջ տեղի ունեցած հանդիպումի ընթացքին

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕ»: Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին երկրորդը, Մոսկուայի եւ Համայն Ռուսիոյ պատրիարք Կիրիլը, Կովկասի մահմեդականների հոգեւոր վարչութեան նախագահ Շեյխ Ուլ Իսլամ Ալլահշուքիւր Փաշա Զադէն Երկուշաբթի, Ապրիլ 26-ին Բաքուում համատեղ յայտարարութիւն են ստորագրել, որով իրենց աջակցութիւնն են յայտնում Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահների՝ Լեւոնայի Ղարաբաղի հակամարտութեան խաղաղ կարգաւորմանն ուղղուած ջանքերին:

«Մենք աջակցում ենք Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահների ջանքերին, մտադիր ենք նպաստել նրանց գործին, այդ առումով կարեւոր ենք համարում հոգեւոր առաջնորդների երկխօսութեան շարունակումը, ինչը վերադարձի հարաւորութիւն կ'ընձեռի իրենց ստեղծից վտարուած մարդկանց», - ասուած է յայտարարութիւնում:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը Ադրբեյջանի մայրաքաղաքում Երկուշաբթի օրը մասնակցել է ԱՊՀ-ի միջկրօնական խորհրդի նախաձեռնութեամբ գումարուած հոգեւոր առաջնորդների համաշխարհային երկրորդ գագաթնաժողովին:

Գագաթնաժողովի ընթացքում հնչեցրած իր ելույթում Վեհափառը անդրադարձել է հայ - ադրբեյջանական խնդրին՝ յոյս յայտնելով, որ Կովկասեան տարածաշրջանում առկայ մարտահրաւէրների յղթա-

հարման եւ խաղաղ ու ստեղծագործ կեանքի ապահովութեան համար համընդհանուր ջանքերը պիտի պակուեն ցանկալի արդիւնքներով:

Ելույթի աւարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին է հրաւիրել Կովկասի մուսուլմանների վարչութեան նախագահ Շեյխ Ուլ Իսլամ Ալլահշուքիւր Փաշա Զադէին:

Նոյն օրը Ամենայն Հայոց Կաթողիկոսին ընդունել է Ադրբեյջանի նախագահ Իլհամ Ալիեւը: Ադրբեյջանի նախագահի պաշտօնակազմի կազմում տեղադրուած հաղորդագրութեան համաձայն՝ հանդիպման ընթացքում նշուել է Բաքուում տեղի ունեցող հոգեւոր առաջնորդների հանդիպման նշանակութիւնը: Ընդգծուել է, որ միջկրօնական կապերի ամրապնդման, հոգեւոր առաջնորդների միջեւ շփումների ընդլայնման առումով նման հանդիպումները կարեւոր են:

Հանդիպման վերաբերեալ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարածած հաղորդագրութիւնում ասուած է. - «Մէկ ժամ տեւած հանդիպմանը անկաշկանդ եւ անկեղծ մթնոլորտում խօսուեց Բաքուում գումարուած Կրօնապետների համաշխարհային գագաթնաժողովի մասին եւ կարեւորութեան կրօնների եւ մշակութիւնների երկխօսութիւնը՝ ի խնդիր ժողովուրդների համար աւելի խաղաղ, ապահով ու բարօր կեանքի կերտման: Այնուհետեւ անդրադարձեալ Լեւոնայի Ղարաբաղի հակա-

ԿՈՉՈՎ ԴԻՍԵԼ ԵՆ ՍՓԻՒՔԻ ԿԱՌՈՅՑՆԵՐԻՆ

«Haynews.am»: ԼՂՀ արտաքին քաղաքականութեան ու անվտանգութեան հանրային խորհուրդը Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան միջազգային ճանաչման գործընթաց նախաձեռնելու կոչով դիմել է Սփիւռքի հայկական կազմակերպութիւններին: Հայկական երեք աւանադական կուսակցութիւններին ու Սփիւռքի լրբիստական կառույցներին յղուած ուղերձում, մասնաւորապէս, ասուած է.

«2009 թուականի Ապրիլից, երբ հայ-թուրքական երկխօսութիւնը տեղափոխուեց հանրային հարթակ, մենք յայտնուեցինք նոր մարտահրաւէրների դէմ յանդիման: Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ բանակցային գործընթացը, հանրայնացուելու արձանագրութիւնների ստորագրումը առիթ դարձան ներհայկական բուռն բանավէճերի: Սեփական խորհրդարանում արձանագրութիւնների վաւերացումը հայերի կողմից Ադրբեյջանի օգտին տարածքային զիջումների հետ կապելու՝ Թուրքիայի շարունակական փորձերը յաւելեալ լարուածութիւն են հաղորդել կովկասեան տարածաշրջանին:

Արեւմտեան հանրութիւնը, Սփիւռքի հայկական կազմակերպութիւնները աջակցութեամբ, ակտիւացրել են Հայոց Յեղասպանութեան միջազգային ճանաչման գործընթացը՝ որպէս ներազդելու միջոց թուրքական դեկաւարութեան վրայ, որը հրաժարուած է հայ-թուրքական հաշտեցման գործընթացում ստանձնած պարտաւորութիւնների կատարումից:

ՍԴՅԿ ԱՏԵՆԱՊԵՏ. «ՄԵՆՔ ՈՂՋՈՒՆՈՒՄ ԵՆՔ ԼՂՀ ՅԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՉԸ»

ԼՂՀ արտաքին քաղաքականութեան ու անվտանգութեան հանրային խորհուրդը հանդէս է եկել յայտարարութեամբ, որտեղ կոչ էր անում Սփիւռքի աւանդական կուսակցութիւններին իրենց քաղաքական օրակարգի առաջնահերթութիւն սահմանել ոչ միայն Հայ Դատի եւ Յեղասպանութեան ճանաչման, այլ նաեւ Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան ճանաչման խնդիրները: Այս առիթով ՍԴՀԿ Հայաստանի ատենապետ Գէորգ Պերկուպերկեանը Haynews.am-ին փոխանցեց.

«Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութիւնը, իբրեւ համահայկական քաղաքական միաւոր, ողջունում է ԼՂՀ արտաքին քաղաքականութեան ու անվտանգութեան հանրային խորհրդի կոչը եւ նշում, որ տարիներ շարունակ ՍԴՀԿ-ն արտասահմանում ունեցած իր հնարաւորութիւններով պայքարել է եւ շարունակելու է պայքարել Արցախի անկախութեան ճանաչման համար: Եթէ մեր գործընկերներն ունեն առաջարկութիւն-

ի պատասխան այդ ներազգայնացման՝ Թուրքիայի քաղաքական դեկաւարութեան ներկայացուցիչները յայտարարեցին տարածաշրջանում իրավիճակի ապակայունացման սպառնալիքի մասին: Նկատի ունենալով Թուրքիայի մերձաւորագոյն դաշնակից Ադրբեյջանի ռազմատենչ ծրագրերը՝ կարելի է չկասկածել, թէ յատկապէս որտեղից եւ ինչ ուղղութեամբ կարող է սկսուել այդ ապակայունացումը: Դրա հետ կապուած՝ հրատապ է դարձել ԼՂՀ անվտանգութեան ամրակայման, այսինքն՝ նոր ցեղասպանութեան վտանգի կրկնման բացառման խնդիրը, այս անգամ արդէն Արեւելեան Հայաստանում:

ԼՂՀ արտաքին քաղաքականութեան ու անվտանգութեան հանրային խորհուրդը գտնում է, որ մեր ժողովրդի համար այնպիսի կարեւոր խնդրի լուծման հետ միասին, ինչպիսին Յեղասպանութեան ճանաչումն է, սփիւռքահայ կազմակերպութիւններին հարկ է քննարկել նաեւ Արցախի Հանրապետութեան միջազգային ճանաչման հարցը որպէս իրենց գործունէութեան հաւասարագոր առաջնահերթ ուղղութիւն:

Հանրային խորհրդի կարծիքով՝ տարբեր երկրների անգամ տեղաշրջանային մարմինների կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից Արցախի ճանաչումը կ'ոգեւորի ու կը զօրակցի արցախցիներին, առաւելս սոկունութիւն կը հաղորդի նրանց եւ բարոյական ու ինստիտուցիոնալ լուրջ աջակցութիւն կը հանդիսանայ:



ՍԴՀԿ Հայաստանի ատենապետ Գէորգ Պերկուպերկեան

ներ, մենք պատրաստ ենք ներդնել մեր բոլոր ջանքերը՝ բոլորիս նուիրական ցանկութեանը հասնելու համար»:

մարտութեանն առնչուող հարցերին: Այս առումով կողմերը ողջունեցին հակամարտութեան խաղաղ կարգաւորմանն ուղղուած ջանքերը, դրանցում կարեւոր նկատելով կրօնապետների եւ հոգեւոր սպասաւորների դերը: Մեծ նշանակութիւն տրուեց երկու ժողովուրդների փոխայցելութիւններին եւ շփումներին, որոնք աւելի պիտի զօրացնեն փոխվստահութեան եւ համագործակցութեան ոգին»:

Նոյն աղբիւրի վկայութեամբ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը շքախմբի ուղեկցութեամբ այցելել է Բաք-

ուի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ հայկական եկեղեցի, որը ներկայումս գործածուած է իբրեւ գրապահոց: Վեհափառը ծանօթացել է 1990 թուականին հրդեհից վնասուած եկեղեցու վիճակին եւ յոյս յայտնել, որ եկեղեցին վերստին դռները կը բացի հաւատացեալների առջեւ: Ապա եկեղեցում տասնամեակներ անց հնչել է հայոց աղօթքն ու շարականը:

Գագաթնաժողովը, որին մասնակցում են ոչ միայն քրիստոնեայ եւ մահմեդական, այլեւ բուդդայա-

# ԼՈՒՐԵՐ

## ՋԵՄԱԼ ՓԱՇԱՅԻ ԹՈՌՈՐ ԿՈՉ Է ԱՆՈՒՄ ՈԳԵԿՈՉԵԼ 1915-ԻՆ ԶՈՐՈՒԱԾ ՐԱՅԵՐԻ ՅԻՇԱՏԱԿԸ

Թուրք յայտնի լրագրող եւ վերլուծաբան, Milliyet օրաթերթի սրևնակագիր Հասան Ջեմալը, ով Հայոց Յեղասպանութեան կազմակերպիչներին եւ իրականացնողներին մէկի՝ այն ժամանակուայ ռազմածովային ուժերի նախարար, Հայոց Յեղասպանութեան գլխաւոր կազմակերպիչներին մէկը համարուող Ջեմալ փաշայի թոռն է, Ապրիլ 24-ին հանդէս է եկել Հայոց Յեղասպանութեան զոհերի յիշատակին նուիրուած «Կիտում եմ հայերի՝ Ապրիլի 24-ի ցաւը» խորագրով յօդուածով:



Ջախին՝ Ջեմալ Փաշայի նկարը, իսկ աջին անոթ բռնակիլը՝ Հասան Ջեմալ

«Այսօր Ապրիլի 24-ն է: 1915թ. Ապրիլի 24-ը Օսմանեան պետութեան խայտառակ էջերից է, որը գրուեց «Իթթիհատ վէ թերաքքի» կողմից: Անատոլիայում հարիւրամեակներով ապրող եւ ստեղծագործող օսմանցի հայերը մեծ տառապանքներ տեսան այն հողերում, որտեղ ապրում էին, մեծ ցաւեր տեսան իրենց իսկ պետութեան մէջ. նրանց արմատախիլ արեցին, կոտորեցին, եւ փորձեցին նրանց հետքն իսպառ ջնջել: Պատմութեան այս էջերը ոմանք որպէս տեղահանութիւն, ոմանք՝ ողբերգութիւն, ոմանք՝ Յեղասպանութիւն, ոմանք էլ՝ Մեծ աղէտ են բնորոշում: Սակայն դա հնարաւոր չէ հերքել», - գրում է Հասան Ջեմալը՝ ընդգծելով, որ Օսմանեան պետութեան կողմից 1915-ից սկսուած հարիւրհազարաւոր հայերի կոտորածն ու մարդկութեան դէմ գործած յանցանքը ժխտելը նշանակում է դառնալ այդ հրէշաւոր եւ սահմուկեցուցիչ արարքի յանցակիցը:

«Իմ ականջին հիմա ձայներ են հասնում՝ միթէ թուրքերը, մահմեդականներն ամենեւին էլ ցաւեր չեն տեսել, միթէ արմատախիլ չեն արուել Բալկաններում, Կովկասում, միթէ գանգոլածախն գաղթի չեն ենթարկուել, միթէ նրանց հետքերը չեն ջնջուել: Բնականաբար, ցաւեր տեսել են: Անատոլիայում եւ՝ թուրքերը, եւ՝ քրդերը, եւ՝ արեւելները պատմութեան խորքերից մինչեւ մեր օրերը հասնող

ցաւեր տեսել են: Բացի այդ, այդ ո՞ր պետութեան, ո՞ր ազգի պատմութիւնն է կազմուած բացառապէս գեղեցիկ էջերից: Սակայն այսօր Ապրիլի 24-ն է. հայերի, հայ ազգի՝ այս հողերում ապրած ողբերգութեան զոհերի ոգեկոչման օրը: Նախ եկէք հայերի՝ Ապրիլի 24-ի վիշտը կիսենք, փորձենք մեր սրտում զգալ նրանց ցաւը, մենք էլ հայերի հետ հաւասարապէս սգանք», - գրում է Ջեմալ փաշայի թոռը՝ անդրադառնալով 2008թ. Ծիծեռնակաբերդի յուշահամալիր աջցելութիւնից իր յուշերին:

«2008թ. Սեպտեմբերին էր, Երեւանում էի եւ այցելեցի Յեղասպանութեան զոհերի յուշահամալիր: Յուշակոթողի առջեւ մի պահ սիրելի Հրանդի [Դինքի] հետ մեն մենակ մնացի: Ինձ այդ յուշակոթող բերել էր Հրանդի ցաւը: Առաւօտ էր, արեւը նոր էր ծագում: Արարատ լեռան վեհապանձ գագաթը մառախուղի քուլաների մէջ մէկ երեւում էր, մէկ թաքնուում: Առաւօտեան լուսութեան մէջ սպիտակ մեխակներ դրեցի Յեղասպանութեան յուշակոթողին եւ ականջիս հասաւ Հրանդի ձայնը. «Եկէք նախ յարգենք միմեանց վիշտը», - գրում է Հասան Ջեմալը՝ եզրափակելով. «Ժամանակն է, որպէսզի մենք եւ՝ անհատապէս, եւ՝ պետական մակարդակով կիսենք հայերի Ապրիլի 24-ի ցաւը: Հրանդ, իմ եղբայր, ես կիտում եմ այդ ցաւը, անկեղծ կարօտում քեզ, հանգիստ ննջիր»:

## ՍՏԵՓԱՆ ԴԵՄԻՐՃԵԱՆԻ ԿԱՐԾԻՔՈՎ՝ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ՈՉԻՆՉ ԷԼ ՉԻ ՓՈԽԵԼ

«Պէտք է ըստ արժանուոյն գնահատենք մեր ջանքերը, թէ Սփիւռքում, թէ Հայաստանում տարուած աշխատանքը՝ ուղղուած Յեղասպանութեան միջազգային ճանաչմանը», - Ապրիլի 24-ին Ծիծեռնակաբերդի յուշահամալիրում Tert.am-ի թղթակցին ասաց ՀԺԿ առաջնորդ Ստեփան Դեմիրճեանը:

Խօսելով հայ-թուրքական Արձանագրութիւնները Հայաստանի խորհրդարանի օրակարգից հանելու որոշման մասին՝ Դեմիրճեանն արձանագրեց, որ ի սկզբանէ ճիշդ էր նախապայմաններով Արձանագրութիւններ ստորագրելը:

«Մենք բազմիցս ասել ենք, որ սխալ էր նաեւ պատմաբանների յանձնաժողովի ստեղծումը: Ըստ էութեան, հայ-թուրքական գործընթացը վաղուց էր յայտնուել փակուղում: Թուրքիան այդ հարցն ի սկզբանէ կապում էր դարաբաղեան հիմնախնդրի հետ», - նշեց Դեմիրճեանը: Ըստ նրա՝ թուրքիան, առհասարակ, հայ-թուրքական մերձեցման գործընթացն օգտագործեց Յեղասպանութեան միջազգային ճանաչումը կասեցնելու, ինչպէս նաեւ դարաբաղեան

հարցում ակտիւ դերակատարութիւն ստանձնելու նպատակով:

«Այս ուղերձը, ըստ էութեան, որեւէ բան չփոխեց: Որեւէ փոփոխութիւն տեղի չունեցաւ, քանի որ հայկական կողմը մինչեւ Արձանագրութիւնները խորհրդարանի օրակարգից հանելը յայտարարում էր, որ դրանք կը վաւերացնի միայն թուրքիայի վաւերացնելուց յետոյ: Ըստ էութեան, ոչինչ չփոխուեց, քանի որ Հայաստանը ստորագրութիւնը հետ չկանչեց», - ընդգծեց ՀԺԿ առաջնորդը:

Նրա դիտարկմամբ՝ Արձանագրութիւններն Աժ օրակարգից հանուեցին նաեւ հաշուի առնելով թէ՛ Հայաստանում, թէ՛ Սփիւռքում տիրող հասարակական տրամադրութիւնները:

Դեմիրճեանը համոզուած է, որ այս ամենից յետոյ թուրքիան անկասկած կը փորձի հանդէս գալ կառուցողական քաղաքականութեամբ եւ գործընթացի ձախողումը կը բարդի Հայաստանի վրայ: Ըստ նրա՝ ի սկզբանէ գործընթացը ճիշդ հունով չի գնացել:

«Հայաստանն այսօր լուրջ մարտահրաւէրների առջեւ է կանգ-

## ԻՐԱԲԱՊԱՇՏՊԱՆՆԵՐԸ ԲՈՂՈՔԻ ԱԿՑԻԱՆԵՐ ԵՆ ԱՆՑԿԱՑՆՈՒՄ ԻՍԹԱՆՊՈՒԼՈՒՄ



Թուրք ցուցարարներ իսթանպուլի մէջ՝ Եղեմի գոհ հայ մտաւորականներու նկարներով

Հայոց Յեղասպանութեան 95-րդ տարելիցի առթիւ շաբաթ օրը քուրդ եւ թուրք իրաւապաշտպանները բողոքի երկու ակցիա անցկացրեցին Իսթանպուլում:

Նախ Իսթանպուլի կենտրոնում գտնուող Թաքսիմ հրապարակին յարող ճեմափողոցում հաւաքուել էին թուրք եւ քուրդ իրաւապաշտպաններ: Այստեղ ամէն շաբաթ բողոքի ակցիա են անցկացնում քուրդ մայրերը, ովքեր պահանջում են իրենց կորած զաւակներին, եւ այսօր, քանի որ Հայոց Յեղասպանութեան 95-րդ տարելիցն էր, քուրդ մայրերն իրենց զաւակների նկարների կողքին պարզել էին նաեւ հայ մտաւորականների նկարներ:

«Մենք պատրաստ ենք այնքան խօսել Հայոց Յեղասպանութեան մասին, մինչեւ վերջապէս այն ընդունեն թուրքիայում», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում ասաց իրաւապաշտպան Օզլեմ Դալկիրան:

Յուցարարներից մի քանի մետր այն կողմ հաւաքուել էին թուրք ցուցարարներ, ովքեր պարզել էին պատասխան եւ կոչեր էին հնչեցնում այն մասին, որ հայերն են թուրքերին կոտորել:

Աւելի մեծ բողոքի ակցիա իրաւապաշտպանները անցկացրեցին «Հայդար Փաշա» գնացքի կայարանում, որտեղից 1915 թուականին արտաքսել են հայ մտաւորականների առաջին խմբին: Այստեղ հնչած ելույթներում բողոքի ակցիայի շուրջ 100 մասնակիցները հնչեցրեցին կոչեր, որ այլեւս երբեք չպէտք է կրկնուեն նման իրադարձութիւնները: Տարածքը շրջապատուած էր

մեծ թուով ոստիկաններով: Իրաւապաշտպանները պարզել էին հայ մտաւորականների նկարները:

Հաւաքուածներին դիմեց իրաւապաշտպան էրեն Քեակիւնը. - «Չպէտք է կրկնուեն այն դէպքերը, որ տեղի են ունեցել 1915 թուականին: Հիմա մենք հաւաքուել ենք այստեղ եւ ասում ենք ոչ Յեղասպանութեանը»:

Ակցիայի աւարտին տարեց մի թուրք տղամարդ փորձեց խանգարել ցուցը՝ բղաւելով. - «Ո՞վ է թոյլ տուել, որ հաւաքուել են այստեղ: Ո՞վ է ասել, որ հայերին են կոտորել: Այդպիսի բան չկայ»:

Ոստիկանների միջամտութեամբ միջադէպը հարթուեց, թուրք տղամարդուն հեռացրեցին դէպքի վայրից:

Քրդական խորհրդարանական «Խաղաղութիւն եւ Ժողովրդավարութիւն» կուսակցութեան Բիթլիսից ընտրուած պատգամաւոր Նեզրի Քարաբաշը յայտարարել է, որ թուրքիան հայ ժողովրդից պէտք է ներողութիւն խնդրի Հայոց Յեղասպանութեան համար, յայտնում է Firat գործակալութիւնը:

Քուրդ գործիչը նշել է, որ միլիոնից աւել հայ է կոտորուել եւ շատ երկրներ են ընդունում դա, իսկ թուրքիան ներողութիւն խնդրելու փոխարէն ժխտում է այդ ամէնը:

Վերջինս իր ելույթում նշել է, որ թուրքիան պէտք է ոչ միայն հայերից ներողութիւն խնդրի, այլ նաեւ քրդերից, որոնց մեղքի է դրդել, ինչպէս նաեւ թուրքերից, որոնց տասնամեակներ շարունակ խաբում է:

## ՕԲԱՍԱՅԻ ԴԱՍԵՐԸ

### Շարունակուած էջ 2-էն

արդարութեան յղթանակի ճանապարհը: Նեարդերը, էներգիան, միտքը, եռանդը, հայրենասիրութիւնը պէտք է առաւելապէս ծառայի, ուղղուի ոչ թէ աշխարհից ինչ որ ճանաչումներ պահանջելու գործին, այլ ամուր պետութիւն,

Ժամանակակից, մրցունակ, օրէնքի, իրաւունքի եւ արդարութեան վրայ հիմնուած պետականութիւն եւ հասարակարգ կառուցելու գործին: Դա պիտի լինի հայրենասիրութեան չափանիշը, դա է արդարութեան եւ ճանաչման հասնելու ճանապարհը, որ կեանքը դադարի անեկղոտ չիչեցնելուց:

## ԱՄԵՆԱՅՆ ՐԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ

### Շարունակուած էջ 1-էն

կան եւ երաշխական հոգեւորականները, աշխատանքները աւարտել է երեքշաբթի օրը:

Ատրպէյճանական լրատուական նել: Դրանց դիմակայելու համար առաջին հերթին պէտք է լուծենք մեր ներքին խնդիրները, համախմբենք հասարակութեանը: Դրա հա-

գործակալութիւնների փոխանցմամբ, երկուշաբթի օրը ցուցարարների մի ոչ մեծաթիւ խումբ հաւաքուել է «Գիւլիտասն» պայատի մօտ եւ բողոք յայտնել Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Բաբու կատարած այցի դէմ:

մար մենք պէտք է արդարութիւն եւ օրինականութիւն հաստատենք երկրում», - եզրափակեց Դեմիրճեանը:

**ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 95 ԱՄԵԱԿ**

**ԱՄԵՐԻԿԱՅՈՒԹԻՒՆԸ ՆՇԵՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 95 ԱՄԵԱԿԸ**

Մեծ Եղեռնի 95-ամեակի օրը Ապրիլի 24-ին Միացեալ Նահանգներու բոլոր հայաշատ քաղաքներուն մէջ պահանջատէր հայ ժողովուրդը նշեց Ցեղասպանութեան զոհ զացած մէկ ու կէս միլիոն հայ նահատակներու յիշատակը:

Բազմահազար հայեր հաւաքուած էին Մոնթեպելլոյի Նահատակաց յուշարձանին առջեւ, ուր տեղի ունեցաւ յուշահանդէս, կազմակերպութեամբ 95-ամեակի ոգեկոչման Միացեալ Մարմին, որ կազմուած էր մեր երեք քաղաքական կուսակցութիւններու, Հ.Բ.Ը. Միութեան, երեք յարանուանութիւններու եւ հայրենակցական միութիւններու կողմէ:

Այստեղ ծաղկեպսակներ զետեղած էին Հայաստանի աւագ հիւպատոսութիւնը, Ս.Դ.Հ.Կ., Հ.Յ.Դ., Ռ.Ա.Կ., Հ.Բ.Ը.Մ. եւ այլ կազմակերպութիւններ, որոնք յարգանքով խոնարհեցան մեր անմեղ նահատակներու յիշատակին առջեւ:

Տեղի ունեցաւ քաղաքական միթինկ, որուն ներկայ գտնուեցան Արմենիստեան թեմի առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, Գերշ. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Հայ Կաթողիկէ ժողովրդապետ Հայր Անտոն Սարոյեան, Հայ Աւետարանական Միութեան հովուապետ Վեր. Ճօ Մաթոսեան, Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփան, Հայաստանի աւագ հիւպատոս տիրար Գրիգոր Յովհանէսեան, Լոս Անճելըսի քաղաքապետ Անթօնիօ Վիլարակոսա, գոնկրէսական Ատամ Շիֆ, Լոս Անճելըսի քաղ. խորհուրդի անդամ Փոլ Գրիգորեան, Մոնթեպելլոյի քաղաքապետ Ռոյ Սօլենարի, հայկական երեք կուսակցութիւններու եւ տարբեր հաստատութիւններու ներկայացուցիչներ եւ շուրջ 6,000 հայորդիներ:

Դրօշակի արարողութենէն եւ երկու երկիրներու քայլերգներու ունկնդրութենէն ետք օրուան հանդիսավար Օշին Քէշիշեան, իր բացման խօսքին մէջ ողջունեց ներկայ

պետական եւ ազգային անձնաւորութիւնները: Ան ոգեկոչելէ ետք մեր նահատակներու խնկելի յիշատակը՝ ցաւ յայտնեց որ ԱՄՆ-ի նախագահ Պարաք Օպաման իր յայտարարութեան մէջ դարձեալ չի յիշատակեց Ցեղասպանութիւն բառը հակառակ իր նախընտրական խոստումին:

Գոնկրէսական Ատամ Շիֆ թէ փաստինայի հաւաքին եւ թէ Մօնթեպելլոյի մէջ, իր հայ դատի ի նպաստ ունեցած զօրակցական ելոյթներով, դատապարտեց նախագահ Օպամայի ժխտական կեցուածքը եւ հաստատեց որ հնարաւոր բոլոր միջոցներով պիտի աշխատի ցեղասպանութեան ճանաչման ի նպաստ:

Ներկայ բազմահազար հայ հասարակութեան վրայ մեծ տպաւորութիւն ձգեց նաեւ Լոս Անճելըսի քաղաքապետ Անթօնիօ Վիլարակոսայի ճառը, որով զօրավիզ կը կանգնէր պահանջատէր հայ ժողովուրդի արդար դատին:

Ելոյթներ ունեցան նաեւ Լոս Անճելըսի մօտ Հայաստանի Հանրապետութեան աւագ հիւպատոս Գրիգոր Յովհանէսեան, Կազմակերպիչ Միացեալ Մարմնի անուսով Լենա Մանուկեան եւ Արամ Գայուստեան, Գալիֆորնիոյ Նահանգային Երեսփոխանական Ժողովի մեծամասնութեան խօսնակ Ջարլզ Գալտէրօն, ինչպէս նաեւ ներկայացուցիչներ Գալիֆորնիոյ կառավարիչ Առնոլտ Շուարթհիլըրի եւ Պարաքա Պաքարի: Բոլոր ելոյթ ունեցողներն ալ խստիւ դատապարտեցին Թուրքիոյ կողմէ 1915 թուականին գործադրուած ցեղասպանութիւնը, պահանջելով անոր անյապաղ ճանաչումը եւ արդար հատուցումը պահանջատէր հայ ժողովուրդին:

Հաւաքի աւարտին տեղի ունեցաւ պաշտօնական հոգեհանգիստ մասնակցութեամբ տասնեակ մը հոգեւորականներու եւ քաղաքական անձնաւորութիւններու:

**ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 95-ԱՄԵԱԿԻ ՅՈՒՇԱՏՕՆ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ**



Առաջին անգամ ըլլալով փաստինայի քաղաքապետարանի հովանաւորութեամբ նշուեցաւ Հայոց Եղեռնի 95-ամեակը, Շաբաթ, 24 Ապրիլ, 2010 մասնակցութեամբ շրջանի բոլոր հայկական կազմակերպութիւններուն, եկեղեցիներուն եւ կրթական հաստատութիւններուն:

Ամերիկեան բանակի զինուորներու կողմէ տեղի ունեցած դրօշակի արարողութենէն ետք ներկաները յոտնկայս ունկնդրեցին ամերիկեան եւ հայկական քայլերգները կատարողութեամբ Կարօ Սիւլահեանի: Ապա հայ կաթողիկէ ժողովրդապետ հայր Անտոն Վրդ. Սարոյեանի զխաւորութեամբ ներկայ հայ տարբեր յարանուանութեանց հոգեւորականները միասնաբար «Հայր Մեր» աղօթքի արտասանուենէն ետք հանդիսավար՝ Ռազմիկ Դաւիթեան ոգեկոչեց 95 տարիներ առաջ ցեղասպանութեան զոհ զացած մեր մէկ ու կէս միլիոն նահատակներու յիշատակը:

Իր բացման խօսքին մէջ «Հայ

ինքնութեան Հունձ» ի նախագահ իսաչիկ Շահինեան պանծացուց 20րդ դարու առաջին ցեղասպանութեան զոհ մեր անմեղ մարտիրոսներու յիշատակը: Ան պահանջեց ցեղասպանութեան ճանաչումը ԱՄՆ-ի կողմէ եւ արդար հատուցում իրաւատէր հայ ժողովուրդին:

Յաջորդաբար խօսք առին Գոնկրէսի անդամ Ատամ Շիֆ, Գալիֆորնիոյ Մերակոյտի անդամ Քարօ Լի, Նահանգային ներկայացուցիչ 44րդ ընտրաշրջանէն Անթօնի Փորթմանթինօ, փաստինայի փոխ քաղաքապետ Վիլթոր Կորտօ, Լա Քանիատայի քաղաքապետ Տանըլտ Վոս, Լոս Անճելըսի քաղաքային վերակացու Մայքլ Անթոնովիչի ներկայացուցիչ Ռիթա Հաճիմանուկեան, փաստինայի 2րդ շրջանի խորհուրդի անդամ Մարկրիթ Մըքասթր: Բոլորն ալ իրենց զօրակցութիւնը յայտնեցին իրաւագուրկ հայ ժողովուրդի արդար դատին, պահանջելով նախագահ

Շաբ.բ էջ 17

**ԸՆԿԵՐՈՒՅԻ ԼԵՆԱ ՍԱՆՈՒԿԵԱՆԻ ԵԼՈՅԹԸ**

Միւրեւի հայրենակիցներ, Թուրքիոյ կողմէ նենգամտօրէն ծրագրուած 1915 Ապրիլի մարդկութեան առաջին պիղծ եւ զագրելի ցեղասպանութիւնը, գործադրուած մեր ժողովուրդին դէմ, տակաւին կը մնայ անպատիժ եւ անլուծ:

Այսօր, Ապրիլ 24, 2010, Հայոց ցեղասպանութենէն 95 տարիներ անց, համայն հայ ժողովուրդը թէ՛ Հայաստանի, թէ՛ Արցախի եւ թէ՛ պիւրեքի տարածքին, առաւել նախանձախնդրութեամբ եւ վճռակամութեամբ, ազգային վերագարթօնի հզօրացած գաղափարախօսութեամբ եւ միասնականութեամբ կը ներկայանայ համայն աշխարհին, բարձրացնելով իր բողոքի ձայնը եւ աւելի քան երբեք տէրն ու տիրականը դառնալով իր սուրբ դատին եւ իրաւունքներուն:

Եղեռնի 95 ամեակի ոգեկոչման միացեալ մարմինը, անցնող ամիսներուն, ոչ մէկ ճիգ ինչպէս բոլոր կազմակերպութիւններու, կուսակցութիւններու, յարանուանութիւններու եւ դպրոցներու հետ համագործակցութեամբ՝ միասնականութեան ջանքով մանդիսանալ, մանաւանդ մեր ժողովուրդի առաջ զոյացած բոլոր դժուարութիւններէ եւ մարտահրաւէրներու



ուղիին մէջ: Վերջին ամիսներու բոլոր իրադարձութիւնները եւ թշնամիի անօգուտ ջանքերը մեր դատը նսեմացնելու մեզ առաւել կը զօրացնեն եւ պայքարի կը մղեն եւ ահաւասի՛կ, մանաւանդ այսպիսի օրով, այստեղ կը կանգնինք ոչ թէ անցեալը ողբալու, այլ մեր միացեալ աշխատանքներով ներկայի եւ գալիք տարիներու փառայեղ յաղթանակները արձանագրելու:

Շաբ.բ էջ 17

**50 ՀԱՁԱՐ ՀՈԳԻ ՄԱՍՆԱԿՑԵՑԱԻ ՄԻԱՑԵԱԼ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ՀՈԼԻՎՈՒՏԻ ՔԱՅԼԱՐՇԱԻՆ**



Հոլիվուտի «Լիթլ Արմինիա» շրջանին մէջ տեղի ունեցաւ պահանջատիրական ցոյց, որուն իրեն մասնակցութիւնը բերին շուրջ 50 հազար հոգի: Սոյն քայլարշարի կամակերպիչներն էին Միացեալ Հայ Երիտասարդական Միութեան անդամները: Հայ համայնքի հոգեւոր պետերու եւ քաղաքական անձնաւորութիւններու առաջնորդութեամբ անոնք հարիւրաւո հայկական դրօշակներով եւ պահանջատիրական կարգախօսներ ունեցող պատաստներով, իրենց բողոքն ու ցասումն արտայայտեցին 20-րդ դարու առաջին ցեղասպանութեան հեղինակներ Օսմանեան Թուրքիոյ եւ անոնց ուղեկիցներուն դէմ: Քայլարշարի աւարտին տեղի ունեցաւ քաղաքական հաւաք:

# ԱՇԽԱՐՀԱՑՐԻ ԶԱՅՈՒԹԻՒՆԸ ՆՇԵՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 95-ԱՄԵԱԿԸ

Շարունակում է 1-էն

Տէր-Պետրոսեան: Իրեն կ'ընկերակցէին ընդդիմադիր այլ կուսակցութիւններու ղեկավարները:

### ԹՈՒՐԲԻԱ

Իսթանպուլի Թաքսիմ հրապարակին վրայ, թուրք ծանօթ մտաւորականներու կողմէ կազմակերպուեցաւ 1915-ի զոհերու յիշատակին նուիրուած միջոցառում մը, որու ընթացքին մտաւորականները յայտարարեցին. «Այդ ցաւը մեր ցաւն է: Այդ սուգը՝ բոլորին»: Առաջին անգամ ըլլալով թուրքիոյ մէջ տեղի ունեցող նման միջոցառումի ընթացքին խօսք առին ծանօթ մտաւորականներ՝ Ջէյնապ Թանապ, Նեշէ Տիւզէլ, Ֆէթիհ Չէթին, Թուրքիոյ Մարդու Իրաւունքներու Միութեան նախագահ Օզթուրք Թուրքթոլան, Թուրքիոյ խորհրդարանի անդամ Ուֆուք Ուրաս եւ ուրիշներ:

Յիշեալ միջոցառումը խանգարելու մտադրութեամբ, շուրջ 40 ազգայնականներ վանկարկեցին «Մուսթաֆա Քեմալի գինուորներն ենք», «Սիրէ կամ հեռացիր», «Անոնք մեզ Օկուս Սամասթ պիտի դարձնեն» (Հրանդ Տինքը սպաննող ոճրագործին ակնարկելով): Ոստիկանութիւնը յաջողեցաւ կանխել դէպքերու զարգացումը եւ ցրուել ազգայնականները:

### ՈՒԱՇԻՆԿԹԸՆ

Ուաշինկթընի մէջ, նախագահ Պարաք Օպամա հանդէս եկաւ Հայոց Յեղասպանութեան զոհերու յիշատակի օրուան նուիրուած ականդական ուղերձով: Ան ըսաւ. «Այս յիշատակի օրը մենք կը յիշենք, որ 95 տարի առաջ սկսաւ 20-րդ դարու ամենադաժան զագանութիւններէն մէկը: Պատմական այս մութ շրջանին, Օսմանեան կայսրութեան վերջին օրերուն, մէկուկէս միլիոն հայեր սպաննուեցան կամ զոհուեցան գաղթի ճանապարհին:

«Այսօր, այս սարսափելի իրադարձութիւններուն մասին մտորելու, դասեր քաղելու օր է: Ես հետեւողականօրէն արտայայտած եմ սեփական կարծիքս այս մասին, թէ ինչ պատահած է 1915-ին, եւ իմ տեսակէտը փոփոխութեան չեմ ենթարկած: Բոլորիս շահերէն կը բխի, որպէսզի հասնինք փաստերու լիակատար, անկեղծ եւ արդարացի ճանաչման: Մեծ Եղեռնը հայ ժողովուրդի պատմութեան ամենաաւերիչ գլուխն է, եւ մենք պէտք է պահպանենք անոր կենդանի յիշատակը՝ տուրք մատուցենք այն մարդոց, որոնք սպաննուած են, եւ որպէսզի անցեալի կոպիտ սխալը



չի կրկնենք: Ես կ'ողջունեմ այն թուրքերը, որոնք 1915 թուականին փրկած են հայեր եւ ուրախ եմ հայերուն եւ թուրքերուն միջեւ այս ցաւալի նիւթին շուրջ թուրքիոյ մէջ սկսած երկխօսութեան համար: Հայ եւ թուրք ժողովուրդները միասին աւելի զօրաւոր կը դառնան, եթէ ճանչնան իրենց ընդհանուր պատմութիւնը եւ սովորական մարդկայնութիւնը:

«Նոյնիսկ 1915 թուականի տրամադրութեան հետ բախուելով, մենք միաժամանակ կ'ոգեւորուինք հայ ժողովուրդի զարմանալի ոգիով: 1915 թուականը վերապրած շատ հայեր եկան Միացեալ Նահանգներ: Հայկական ծագումով ամերիկացիներու սերունդները հարստացուցին մեր համայնքները, խթանեցին մեր տնտեսութիւնը եւ ամրապնդեցին մեր ժողովրդավարութիւնները: Հայերու ամուր աւանդութիւնները ու մշակույթը դարձաւ նոր հանրապետութեան հիմքը: Ան մաս կազմեց ազգերու համայնքին, համագործակցելով միջազգային հանրութեան հետ՝ կառուցելու համար աւելի լաւ ապագայ: «Այսօր՝ մենք անոնց եւ աշխարհասփիւռ հայերու հետ կը սգանք 1915 թուականի սարսափելի իրադարձութիւնները՝ խորը հիացմունքով անոնց ունեցած ներդրումին, որ դուրս է այդ մութ անցեալի սահմաններէն եւ կը ներշնչէ ապագայի յոյսը»:

### ՊԵՅՐՈՒԹ

Շաբաթ, 24 Ապրիլ 2010-ի առաւօտուն, Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարին մէջ մատուցուած Ս. Պատարագով, հոգեհանգստեան պաշտօնական արարողութեամբ, ուր վերջոյ օրինապահ ու խիտ շարքերով քայլարշաւով՝ Անթիլիասի մայրավանքէն մինչեւ Պուրճ

Համուտ, հայ ժողովուրդի զաւակները ոգեկոչեցին յիշատակը իրենց առաւել քան մէկուկէս միլիոն նահատակներուն:

Անթիլիասի մայրավանքին մէջ Մեծ Եղեռնի յիշատակին տեղի ունեցաւ ծաղկեպսակներու զետեղման արարողութիւն, որուն մասնակցեցան քաղաքական կուսակցութիւններու, հայկական բազմաթիւ կառույցներու ղեկավարներ եւ ներկայացուցիչներ, Հ.Մ.Մ.ի փոքրախումբին մասնակցութեամբ:

Լիբանանի մօտ Հայաստանի դեսպան Աշոտ Քոչարեան դեսպանութեան անձնակազմին անունով զոհերու յիշատակին զետեղեց ծաղկեպսակ մը:

Արամ Ա. Կաթողիկոսի հայրապետական հանդիսապետութեամբ, ի ներկայութիւն պետական նախարար Ժան Օղասապեանի, պետական երեսփոխաններ ընկեր Սեպուհ Գալիփաքեանի, մեթր Սերժ Թուրսարգիսեանի, Նետիմ ձեմաշէլի եւ այլոց մայրավանքի Ապրիլեան Նահատակաց՝ աշխարհի առաջին Յուշակոթող-Մատրան առջեւ տեղի ունեցաւ հոգեհանգստեան արարողութիւն:

Հայոց Յեղասպանութեան 95-ամեակի նշման Լիբանանի կեդրոնական յանձնախումբի կազմակերպութեամբ, Անթիլիասի Մայրավանքէն մինչեւ Պուրճ Համուտ ժողովրդային քայլարշաւ տեղի ունեցաւ, 60,000 հոգիներու մասնակցութեամբ: Պուրճ Համուտի մարզադաշտին մէջ տեղի ունեցաւ յիշատակի հանրահաւաք: Հանրահաւաքին երկօրեան ունեցան Հայոց Յեղասպանութեան ոգեկոչման մարմնի անդամներ ընկեր Ալեքսան Քէօզկէրեան, Համբիկ Մարտիրոսեան, ինչպէս նաեւ Յ. Բազրատունի եւ պետական նախարար Ատնան Հիւսէյն:

Ոգեկոչման հանդիսութեան ներկայ գտնուեցան պետական նախարար Ժան Օղասապեան, պետական երեսփոխաններ ընկեր Սեպուհ Գալիփաքեան, մեթր Սերժ Թուրսարգիսեան, Լիբանանի թեմի բարեջան Առաջնորդ Գեղամ եպս. Խաչերեան, Հայկազեան Համալսարանի տնօրէն վերապատուելի Փօլ Հայտսեան, հայ քաղաքական կուսակցութեանց եւ տարբեր հասարակական կազմակերպութիւններու ներկայացուցիչներ:

Նոյն օրը երեկոյեան, Սբ. Գրիգոր Լուսաւորիչ ձեմարանի շրջափակին մէջ, Մեծ Եղեռնի զոհերու յիշատակին մատուցուեցաւ հանդիսաւոր Սբ. Պատարագ, մասնակցութեամբ հայ կաթողիկէ կազմակերպութեանց եւ միութիւններուն, եւ հայ կաթողիկէ վարժարաններու աշակերտութեանց: Յաւարտ Սբ. Պատարագին, ներկայ ժողովուրդը թափօրով ուղղուեցաւ Հայ Կաթողիկէ Պատարագարանին շրջափակը, ուր, Ապրիլեան Եղեռնի Յուշակոթողին շուրջ տեղի ունեցաւ հոգեհանգստեան արարողութիւն:

### ՈՒՐՈՒԿՈՒԵՑ

Շնորհիւ Ուրուկուէյի Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան եւ Հ.Բ.Լ.Մ.-ի ճիգերուն, Մոնթեվիտէոյի «Արմենիա» հրապարակին վրայ տեղի ունեցաւ խաչքարի տեղադրում:

Ուրուկուէյի նախագահ Խոսէ Մուխիկա անձամբ մասնակցեցաւ Մոնթեվիտէոյի մէջ կազմակերպուած Հայոց Յեղասպանութեան 95-ամեակին նուիրուած հանդիսութեան: Ան նաեւ մասնակցեցաւ խաչքարի օծման արարողութեան:

### ՍՈՒՐԻԱ

Դամասկոսի Առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ, Դամասկոսի թեմի Առաջնորդ Արմաշ սրբազան Նալպանտեանի նախագահութեամբ, Յեղասպանութեան 95-ամեակին նուիրուած Սուրբ Պատարագ մատուցուեցաւ, ապա ցեղասպանութեան յուշարձանին մօտ տեղի ունեցաւ հոգեհանգստեան պաշտօն: Սուրիոյ մօտ Հայաստանի դեսպան Արշակ Փոլատեան՝ դեսպանատան անձնակազմին անունով ծաղկեպսակ մը զետեղեց Մեծ Եղեռնի զոհերու յուշարձանին:

### ՎՐԱՍՏԱՆ

Թիֆլիսի, Ջաւախքի եւ Վրաստանի այլ հայաշատ բնակավայրերու մէջ տեղի ունեցան ոգեկոչման եւ յիշատակման եկեղեցական արարողութիւններ եւ բազմաթիւ այլ միջոցառումներ: Թիֆլիսի մէջ տեղի ունեցաւ Մեծ Եղեռնի զոհերուն

Շաբ.ը էջ 7



Blue Cross of California  
Authorized Agent



Blue Shield of California  
Authorized Agent

## SERVING SINCE 1975

# BEDROS S. MARONIAN

(818) 500-9585  
BMaronian@AOL.com

FAX 500-9308 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205

ԵՐԻԵՔ ՈՒՇ ԶԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ՁԵՐ ԱՊԱԹՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ





A.A.A. INSURANCE SERVICES

# ԱՇԽԱՐԱՅՈՒԻ ԴԱՅՈՒԹԻՒՆԸ ՆՇԵՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 95-ԱՄԵԱԿԸ

Շարունակում է 6-էն

նուիրումը գրական-երաժշտական երեկոյ մը:

### ՆԻՒ ԵՈՐՔԻ

Նիւ Եորքի եւ Նիւ Ճըրզիի նահանգներուն մէջ տեղի ունեցան Հայոց Յեղասպանութեան 95-ամեակին նուիրումը ոգեկոչման միջոցառումներ, յուշ երեկոներ, հոգեհանգստեան պաշտօններ եւ ընդունելութիւններ: Հանդիսութիւնները հովանաւորուեցան Նիւ Եորքի մօտ Հայաստանի դիւանապետական անձնակազմի եւ հայկական կազմակերպութիւններու կողմէ:

Հանդիսութիւններուն մասնակցեցան ՄԱԿ-ի քարտուղարութեան եւ Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու Տան անդամներ, ցեղասպանութիւնը վերապրողներ, ինչպէս նաեւ բազմաթիւ հայորդիներ:

Նիւ Եորքի «Թայմզ» հրատարակի աւանդական դարձած միջոցառումը անձրեւներու պատճառով տեղափոխուեցաւ Մ. Վարդան Մայր Տաճար, ուր հազարաւորներու մասնակցութեամբ տեղի ունեցած հաւաքի ընթացքին ելոյթներ ունեցան Ամերիկեան քաղաքական դէմքեր եւ հայկական կազմակերպութիւններու ներկայացուցիչներ:

Խօսք առնողներու շարքին էին գոնիկէսական Ֆրանք Փալոն, Հայկական Միացեալ Ֆոնտի նախագահ Յարութ Սասունեան, ՄԴՀԿ Հայ Ամերիկեան Խորհուրդի Արեւելեան Ամերիկայի ատենապետ Տիգրան Նալպանտեան եւ ուրիշներ:

### ԱՐԺԱՆԹԻՆ

Պուէնտս Ալդէսի Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարին մէջ մատուցուեցաւ Մ. Պատարագ եւ տեղի ունեցաւ հոգեհանգստեան պաշտօն ի յիշատակ Հայոց Յեղասպանութեան զոհերուն: Սոցն արարողութեան մասնակցեցաւ Արժանթինի մօտ Հայաստանի դեսպան Վ. Կարմիրշալեան: Այնուհետեւ տեղի ունեցաւ ոգեկոչման կեդրոնական միջոցառումը, որուն գլխաւոր բանախօսն էր դեսպան Վ. Կարմիրշալեանը:

### ՅՈՒՆԱՍՏԱՆ

Յունաստանի մայրաքաղաք Աթէնքի մէջ, Հայոց Յեղասպանութեան 95-ամեակին առթիւ, նահատակաց ոգեկոչման արարողութիւնները սկսան Ապրիլ 23-ի երեկոյեան: Աթէնքի Մէլա Զմիւռնի թաղամասին մէջ տեղի ունեցաւ ցեղասպանութեան զոհերու յիշատակին ոգեկոչման արարողութիւն: Սալոնիքի եւ Կոմոթինի մէջ նոյնպէս տեղի ունեցան հանդիսութիւններ:

### ԿԻՊՐՈՍ

Կիպրոսի քաղաքական բոլոր կուսակցութիւնները Հայոց Յեղասպանութեան 95-րդ տարելիցի կապակցութեամբ հրատարակեցին ցեղասպանութիւնը դատապարտող հաղորդագրութիւններ եւ իրենց համերաշխութիւնը յայտնեցին հայ ժողովուրդին: Հայոց Յեղասպանութիւնը դատապարտող յայտարարութիւններով հանդէս եկան նաեւ Կիպրոսի Հանրապետութեան նախագահը, խորհրդարանի նախագահը եւ վարչապետը:

### ՂԱԶԱՆԻՍՏԱՆ

Ղազախիստանի մայրաքաղաք Ալմա Աթայի Ս. Կարապետ եկեղեցիին մէջ տեղի ունեցաւ հոգեհանգստեան արարողութիւն, որմէ ետք մասնակիցները ծաղկեպսակներ գետեղեցին հայկական մշակութային կեդրոնին մէջ գտնուող խաչքար յուշակոթողին: Ղազախիս-



տանի հայաշատ քաղաքներու մէջ տեղի ունեցան Մեծ Եղեռնի զոհերու յիշատակին նուիրումը միջոցառումներ:

### ՄԵԾ ԵՂԵՐՆԻ

Մեծ Եղեռնի զոհերու յիշատակութեան օրը նաեւ նշուեցաւ Քիրքիզիստանի մայրաքաղաք Պիշքէքի մէջ:

### ԻՐԱՆՏԱ

Իրլանտայի փոքրաթիւ հայ համայնքը առաջին անգամ ըլլալով իր բողոքի ձայնը յաջողեցաւ հասցնել Թուրքիոյ մերժողական քաղաքականութեան դէմ: Արդարեւ, Հայոց Յեղասպանութեան 95-րդ տարելիցին օրը բողոքի ցոյց մը կատարուեցաւ Տապլինի մօտ Թուրքիոյ դեսպանատան առջեւ:

### ՊԻԵՆՈՒՍԻԱ

Պիւլոուսիոյ մայրաքաղաք Մինսքի Ս. Ալեքսանտր Նեվսքի եկեղեցիի բակին մէջ տեղադրուած հայկական խաչքարին մօտ կայացաւ Հայոց Յեղասպանութեան 95-րդ տարելիցին նուիրումը սոց միջոցառում: Ելոյթներ ունեցան Պիւլոուսիոյ մօտ Հայաստանի դեսպանութեան ժամանակաւոր հաւատարմատար Ս. Զաքարեանը եւ Մինսքի քաղաքային հայկական մշակութա-լուսաւորչական «Հայաստան» ընկերութեան պետ Գ. Եղիազարեանը:

### ՄՈՍԿՈՒԱ

Մոսկուայի մէջ նոր կառուցուող հայկական եկեղեցոյ տարածքին տեղադրուած խաչքարին մօտ կայացաւ ծաղկեպսակի գետեղման արարողութիւն՝ 1915 թուականի ցեղասպանութեան զոհերու յիշատակին: Միջոցառման մասնակցեցան Ռուսաստանի մօտ Հայաստանի դեսպան Օլէք Եսայեան,

# ԹՐՔԱԿԱՆ ԴԱԻԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

ՀԱՅԿ ՆԱԳԳԱՇԵԱՆ

Անցեալ տարի՝ 2009 Ապրիլի 24-ի առթիւ ներկայացած առիթը փախուցուցինք Հայաստանի նախագահ Ս. Սարգսեանի քաղաքական սխալ հաշուարկին պատճառաւ, որուն փոխարէն ինչ նիւթական վարձատրութիւն ստացաւ՝ ստուգապէս չենք գիտեր, սակայն կասկածէ վեր է որ միջազգային մարմիններու եւ մեծերու կողմէ շնորհուած գնահատանքին անհրաժեշտօրէն պէտք ունէր ան, իր վարկաբեկուած իշխանութիւնը տակաւին պահպանելու համար:

Կեդրոնանալով Յեղասպանութեան ճանաչման համար տարուող աշխատանքներուն եւ ձեռքագրուած արդիւնքին՝ կրնանք ըսել թէ մօտեցած չենք յաջողութեան: Արդարեւ, Մ. Նահանգներու նախագահ Պ. Օպաման այդ առթիւ արտասանած իր ուղերձին մէջ մասնաւորապէս ըսաւ. «Իննսուն չորս տարի առաջ 20-րդ դարու մեծագոյն վաշտակութիւններէն մէկը սկիզբ առաւ: Ամէն տարի կանգ կ'առնենք յիշելու համար մէկ ու կէս միլիոն հայերը, որոնք Օսմանեան կայսրութեան վերջին տարիներուն ընթացքին ջարդուեցան, կամ դէպի իրենց մահը քաղցին: Ոչինչ կրնայ ետ բերել Մեծ Եղեռնի ընթացքին հայ ժողովուրդին ստուած մարդկային կորուստները»:

Վերոյիշեալ ուղերձին մէջ Օպաման ըսաւ ամէն բան, բացի Յեղասպանութիւն բառ գործածելէ: Թէ ինչո՞ւ պատասխանը կը գտնենք ուղերձին շարունակութեան մէջ: «Ես նաեւ զօրավիգ կը կանգնիմ իրենց յարաբերութիւնները բնականոնացնելու համար թուրքիոյ ու Հայաստանի շանքերուն: Երկու կառավարութիւնները Զուլիցելիոյ հովանաւորութեամբ բնականոնացման ծիրի մը եւ «մաքու քարտէս»ի մը շուրջ համաձայնութիւն գոյացուցած են»:

Կը հետեցուի ուրեմն որ Հայաստանի նախագահին սխալ, կամ սխալ ժամանակին կատարած նախաձեռնութիւնը առիթ տուաւ Մ. Ն. նախագահին խուսափելու «Մեծագոյն Ողբերգութիւն» կոչածը ճիշդ անունով՝ Յեղասպանութիւն որակելէ, ինչ որ երկար տարիներէ ի վեր բացայայտած իր համոզումը եղած էր:

Յետագային նախագահ Սարգսեանի Սփիւռքի մէջ կատարած շրջապայութեան ընթացքին սփիւռքահայութեան բազմակողմ շօշափելէ, իրեն դէմ ընդհանրապէս ցոյց տրուած անհամակիր եւ նոյնպէս դատապարտութեան շեշտ ունեցող արտայայտութիւնները լսելով եւ ասպ նաեւ Տէյք-էլ-Զօրի այցելելով ցուցաբերած դիմափոխութիւնը յապաղած եւ թափանցիկ ռազմավարութիւն մըն է, որ արդէն իսկ գործուած սխալները դարմանելու չի կրնար ծառայել:

Ներկայիս, 2010 Ապրիլի 24ի նախօրեակին, Թուրքիոյ արտաքին գործոց նախարար ԱՏճէտ Տաւու-

տօղլու կոչ կ'ընէ ոչ միայն Հայաստանի պետութեան, այլ նաեւ սփիւռքահայութեան հետ երկխօսութիւն կատարելու: Այս մասին Տաւուտօղլուի տեսակէտները հրատարակուած են թրքական «Թուտէզ Ջաման» եւ «Պոսթըն Կլոպ»ի մէջ, պատասխանելով Մ. Նահանգներու Արտաքին Յարաբերութեանց Յանձնախումբի հարցումներուն: Ան կ'ըսէ. «Ամերիկայի եւ Եւրոպայի (ո՞ւր է, մանաւանդ, Միջին Արեւելքի Հայութիւնը) թուրքերը եւ հայերը ֆարիզի եւ Պոսթընի մէջ պէտք է միասնաբար նստին փորձելով հաշտեցնելու իրենց 1915-ին պատահած յիշողութիւնները, որոնք հայերը բնաջնջումի արշաւ մը կը նկատեն, մինչ թուրքերը կը պնդեն, թէ անոնք սարսափելի սպանութիւններ էին իբրեւ հետեւեակ կայսրութեան մը կործանման: Ան ըսած է նաեւ թէ «ոչ ոք միակողմակօրէն իր յիշողութիւնը պէտք է պարտադրէ միւս կողմին, շեշտելով թէ Թուրքիան կը ժխտէ Յեղասպանութեան մասին հայկական պնդումները, պատահածը վերագրելով Օսմանեան կայսրութեան դէմ հայերու ըմբոստութեան՝ գործակցելով ռուսական բանակին հետ, նպատակ ունենալով Անատոլի մէջ հայկական պետութիւն հիմնելու: Մինչ իրականութիւնը այն էր որ թրքահայութեան ուզածը միակ կարելին էր՝ ինքնավարութիւն եւ մարդկային տարրական իրաւունքներու յարգումը, հայոց դէմ կեղեքումի եւ այլազան բռնութեանց դադրեցումը, բաներ՝ որոնցմէ զրկուած էին իրենց իսկ պատկանած հազարամեայ հայրենիքին մէջ»:

Ամէն պարագայի տակ Տաւուտօղլուի երկխօսութեան առաջարկին հիմնական նպատակը անգամ մը եւս իսպախելու ստեղծելն է, որ ահա կը տեսնէք թուրքերու հայերը երկխօսութեան մէջ են, ուրեմն չխանգարենք արտաքին միջամտութիւններով:

2009 Ապրիլի 24ի առթիւ նախագահ Օպամայի կողմէ Յեղասպանութիւնը ճանչնալու մասին յայտարարութիւնը խանգարած Սերժ Սարգսեանի սխալէն յետոյ, ներկայիս, 2010 Ապրիլի 24ի առթիւ Թուրք արտաքին գործոց նախարար Տաւուտօղլուի երկխօսութեան կողմնոյն այդ նպատակը հետապնդող նենգ նախաձեռնութիւն մըն է այս անգամ եւս ձախողեցնելու համար Մ. Նահանգներու կողմէ եւ ընդհանրապէս Յեղասպանութեան ճանաչումը:

Բայց, այս առնչութեամբ կարեւոր իրադարձութիւն մըն է Մ. Նահանգներու Ներկայացուցչական Տան Արտաքին Յարաբերութեանց Յանձնախումբին Յեղասպանութիւնը ճանչնալու որոշումը, որ պարտաւորեցնող կրնայ չըլլալ, սակայն նախագահ Օպամայ կրնայ որդեգրել զայն իբրեւ պետական քաղաքականութիւն, եթէ տակաւին կը մնայ իր նախկին համոզումին վրայ, եւ եթէ Թուրքիոյ հետ փոխադարձ շահերու վրայ հիմնուած քաղաքականութիւնը գերիվեր չնկատէ արդարութեան:

## 95 ԱՄԵԱԿ ԳԻՏԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ ԵՐԱՇԽԻՔՆ Է ՄԵՐ ԴԱՏԻ ՅԱՂԹԱՆԱԿԻ

ՊՕՂՈՍ ԹԻԻԹԻՆՉՆԵԱՆ  
Պատմական Գիտութիւնների դոկտոր

1915 Ապրիլ 24  
Հայ ժողովրդի յիշողութեան ու սրտում շիկացած երկաթով գրուել է սեւ թուական մը...

Հայկական Եղեռնի եւ հայ ժողովրդի տարագրութիւնը գործադրուեց այնպիսի օրերին, երբ միջազգային թատերաբեմի վրայ միահեծան իշխում էին գաղութարար պետութիւնները, ինչպէս նրանք առհասարակ վարում էին բոլոր ճնշուած ժողովուրդների հետ, նոյնպէս ստեղծագործ հայ ժողովրդի կեանքին ու ճակատագրին մօտեցում էին շահագրգիռական նկատառումներով:

Թրքական կառավարութիւնը, որ այն ժամանակ գտնուում է երիտասարդ թուրքերի ազգայնամոլ կուսակցութեան ձեռքում, ունէր նուաճողական նպատակներ եւ վաշտուած էր հովանաւորութիւնը կայսերական Գերմանիայի եւ գաղութատիրական միւս պետութիւններին, որոնց նպատակն էր գաւթել Մերձաւոր Արեւելքը: Նրանք համաձայն էին հայկական ջարդերին, որովհետեւ արեւմտահայերի ազատագրական ձգտումները խոչընդոտ հանդիսանում էին գաղութարարների յափշտակութեան ծրագրերին իրագործման գործընթացին:

Այս մասին մէջբերում Զոն Կիրակոսեանից: Կիրակոսեանը, կուռ առաջաբանի մը մէջ (65 էջ) քօղազերծ անում էր միաժամանակ դաշնակից պետութիւնների յետպատերազմեան եսամոլ եւ շահախնդիր քաղաքականութիւնը:

Ան ասում է՝ «...այդպէս դաշնակիցները ոչինչ ըրին, երբ անհրաժեշտ եղաւ, որպէսզի իրենց զինուորական եւ նիւթական օժանդակութիւնը բերեն ի նպաստ մահամերձ ու անկողմին եզերքը հասնող իրենց փոքրիկ դաշնակիցը՝ Հայաստանը վերակենդանացնելու համար»:

Ահա այսպիսի ժամանակաշրջանում, վերոյիշեալ ջարդարարների կողմից եւ մատնանշուած նպատակների համար գործադրուեց Ապրիլեան Եղեռնը, որ գրեթէ իր նմանը չկայ բարբարոսութիւնների տարեգրութիւնում:

Հայ ժողովուրդը երբեք չի մոռանում այդ շարագուշակ թուականը: Աշխարհում որ անկիւնում էլ գտնուի եւ ինչ պայմաններում էլ ապրի հայը՝ ոչ մէկ ուժ, ոչ մէկ միջոց, ոչ ոք պիտի կարողանայ նրա յիշողութիւնից ջնջել անջնջելի՛ն՝ յաւերժական յիշատակը Ապրիլեան Եղեռնի մէկ ու կէս միլիոն նահատակներին:

95 տարի է անցել եղերական այդ թուականից ի վեր:

Տուեալ ժամանակամիջոցում, համաշխարհային բեմի վրայ շատ բան է փոխուել, ստեղծուեց ԽՍՀՄ-ը, ունեցաւ հզօր ազդեցութիւնն ու կշիռը, մանաւանդ ժողովուրդների ազգային ազատագրական շարժումներին, ռահվիրանը հանդիսացաւ Երկրորդ Համաշխարհային պատերազմին ֆաշիստական Գերմանիայի դէմ յաղթանակին: Աշխարհում տեղի կ'ունենան գիտութեան եւ տեխնիկական հսկայական զարգացումը, հիմնուեց Միացեալ ազգերի կազմակերպութիւնը (ՄԱԿ), գա-

ղութատիրութեան տիրապետութեան տակ գտնուող երկրների ազատագրական պայքարը հասնում է անկախութեան եւ գերիշխանութեան:

Նաեւ Խորհրդային Միութեան փլուզումը 1990-ական թուականներին, որ ունեցաւ իր ժխտական ազդեցութիւնը միջազգային գետնի վրայ առաջացող շարք մը քաղաքական իրադարձութիւններին: Մերձաւոր Արեւելքում արաբ-իսրայէլեան պատերազմը, Աֆղանստանի, Իրաքի գրաւումը եւ այլն:

Այո՛, պատմական ճշմարտութիւն է, որ 21-րդ դարում քաղաքական, տնտեսական, ընկերային եւ այլ ասպարէզներում զարգացումներն ու իրադարձութիւններն արագ ընթանում են, թողնելով որոշ դրական եւ, ընդհանրապէս, ժխտական ներքին, մանաւանդ, քաղաքական, գիտութեան, տնտեսական եւ սոցիալական գետնի վրայ:

Վերոյիշեալ հակիրճ ներածականից յետոյ, անցնենք մեր օրուայ թեմային:

Եղեռնից մագապուրծ հայ բեկորները այսօր ապրում են սփիւռքի ամբողջ տարածքում, եւ, առաջին հերթին, արաբական հողերում, հայ գաղթականները գտան եղբայրական ընդունելութիւն եւ կառուցելու, ստեղծագործելու ամէն կարելիութիւն: Եւ Սիրիայի, ու յատկապէս Լիբանանում, երէկի գաղթական, բաց շինարար հայը, որ այսօր ունի տուն, դպրոց, եկեղեցի ու մշակույթ, ինչպէս կարող է Ապրիլի 24-ի ոգեկոչումին առիթով, երախտագիտութեամբ չիշել, թէ արաբ ժողովուրդները հայ տարագիր բազմութիւններին առջեւ բացին իրենց գիրկը այն պահուն, երբ ամբողջական բնաջնջման վտանգն էր սպառնում նրանց: Իւրաքանչիւր հայ ինչպէս իր աչքին բիբին նման չգուրգուրայ հայ եւ արաբ ժողովուրդների անքակտելի բարեկամութեան վրայ:

95 տարիներ անցել են եղերական այդ թուականից: Կեանքի համար դաժան ու տառապանքի, կուռի, բաց մանաւանդ վերածնունդի ու յաղթանակի տարիներ: Այսօր կ'ապրի եւ կը ստեղծագործի կենսանորոգ հայ ժողովուրդը եւ աւելի հզօր, աւելի հաւատաւոր:

Այսօր հոն Արաբստիստի, կը խոչանայ անկար Հայաստանը, որ շարունակութիւնն է Խորհրդային Հայաստանի, շքեղ մեր մայր Հայրենիքը, բազմապատկուած մարմնացումը հայ նահատակների երագին: Ինչպէս ասում է՝ առանց անցեալի չկայ ապագայ, առանց ներկայի չկայ անցեալ...

Պահ մը դիտենք՝ 95 տարուայ ընթացքում, միջազգային գետնի վրայ ընդհանուր իրադարձութիւններին ու փոփոխութիւններին եւ քաղաքական զարգացումների հետ ժողովուրդների մօտ հետզհետէ զարգացաւ գիտակցութիւնը, նոյնպէս հայ ժողովրդին մօտ, այլեւս կուրօրէն չեն հետեւում ուռուցիկ, արկածախնդրական եւ երեւութական կարգախօսներին, այլեւս սկսել են զանազանել ճիշտ ու անճիշտը, օգտակարն ու անօգուտը եւ մտածուած ձեւով դիտում եւ հետեւում են 21-րդ դարում արագ ընթացող զարգացումներին եւ իրադար-

833 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065



**Dr. Missak Ekmekdjian**  
Chiropractor



**Dr. Anahid Ekmekdjian**  
Chiropractor

Մեծահասակներու եւ մանուկներու Բայթոպիոթերի բուժում:  
Գլխացաւ, վզի, մէջքի, յօդային եւ մկանային ցուեր:  
Ինքնուշարժի վթարի ետեւանքով պտտուած  
զնապարտներու բուժում:

Ձեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

# ՍԵԼԵԿԵԱՆ ԹԱԳԻ ՅԱՆՁՆՈՒՄԸ ՏԻԳՐԱՆ ԱՐՔԱՅԻՆ (Հատուած, «Տիգրան Արքայի Մուտքը Մոսկուայի Լեռան Շէն» անտիպ էստէյից)

## ՊՕՂՈՍԼԱԳԻՍԵԱՆ

Առաւօտ էր, Տիգրան Արքայի առաջին առաւօտը Անտիոքում: Պալատի առաջ կանգնած խորհել էր քաղաքի ամփիթատրոնում կայանալիք Անտիոքի թագաւորութեան գահի փոխանցման արարողութեան մասին, իր արտասանելիք ելոյթի մտքերն էր ամփոփել: Դիտել էր Անտիոքի համայնապատկերը, շքեղ էր այն, հիացել արմէնների պողոտայի գեղեցիկ արարումով: Նայել, ինչպէս էր արեւը բազմում կասէյրի լեռան գագաթ, ժպտում քաղաքին, լոյս ցանում քաղաքի վրայ, կապոյտ փուռն էր անխաղաղ ծովի ջրերին, որի դողից սպիտակ ալեակներ էին յառնում, վագում նրա ափերի աւազին երեսին հանգեցնու, ժայռերին փշրուելու:

Մոսկուայի կենտրոն էին Անտիոքի փողոցներով կանչել՝ «է հէյ անտիոքացիներ, մտիկ արէ՛ք, այսօր ձեր քաղաքի ամփոթատրոնում կայանալու է Ասորիքի նոր տիրակալ, արմէնների թագաւոր, արեւելքի Արքաների Արքայ Տիգրանին, Անտիոքի Սելեւկիան թագաւորների թագի յանձման արարողութիւնը: Շտապէ՛ք Ամփիթատրոն»:

Անտիոքն էր խինդով բռնկել: Անտիոքիները տօնական հանդերձներով, ծաղիկների փունջեր վեր պարզած, շարան, շարան գնում էին դէպի քաղաքային ամփիթատրոն: Արմինայի թագաւորը, անդորր ու բարգաւաճում պիտի բերէր իրենց քաղաքին: Արմինայի էին արեւի ծիածանի, իրենց արտերում հասած ցորենանի գոյնների հագուստներով: Իրենց տների բակերում, քաղաքամերձ մայրիկներում հասած մրգերով լի կողովներ, թոնիրներում եփած հացեր, փարչերով գինի, ծաղիկների փունջեր, դափնու ծառերի ոստերի, հիմքայի խուրձեր բռնած գնում էին ամփիթատրոն: Իրենց Արմինայի արքան էր թագաւորելու Անտիոքում: Նրանց հետ քայլում էին նաեւ իրենց Տիգրան թագաւորի գործի հետ ժամանած հայերը:

Միջօրէ, երբ Միհր արեւ աստուածը կը բազմէր քաղաքի երկնակամարի մէջտեղ, Անտիոքի Սելեւկեան թագաւորութեան թագն էին յանձնելու Արմինայի թագաւոր, արեւելքի Արքաների Արքայ, արեւածին հայկազուն Տիգրանին: Որպէս իրենց Միհրական պաշտամունքի երկրպագու, Արքն էր հրամայած եղել, որ թագի փոխանցումը կատարուէր ճիշտ միջօրէին, որպէսզի Արա-Մազզի որդի Միհր էր հրեղէն ճառագայթներով ողջուն յղէր իրեն, իջնէր արմէնների տոհմական թագի արեւին: Նրանից յորդած լոյսը փուռէր ամփիթատրոնի վրայ, կարմիր կրակ ժպիտ ցանէր այնտեղ եկած մարդկանց սրտերին:

Առաւօտ էր դեռ, սակայն անտիոքացիները շտապում էին դէպի ամփիթատրոն նատատեղ գրաւելու համար: Բիւր, բիւրերով տարբեր ազգերի, ցեղերի մարդկանց քաղաք էր Անտիոքը: Ովքեր չպիտի կարողանային ամփիթատրոն մուտք գործելու վայելքին արժանանալ, պիտի խմբուէին նրա շրջակայքի բարձր տեղամասերին: Այնտեղից էին դիտելու Անտիոքի թագաւորութեան Սելեւկեան թագի յանձնման արարողութիւնը, ունկնդրելու փողերի նուագը, այնտեղից դիտելու բեմականացումները, թմբուկների զարկերի որոտների հետ բռնած շուրջպարերը:

Շքեղ էր Անտիոքը, նոր Աթէնք, Հռոմ, Բաբելոն, Նինուէ, Պերսեպոլիս եւ երեւի ոչ Տիգրանակերտ: Բարգաւաճ էր այն իր հիասքանչ պալատներով, զանազան կառուցներով, վաճառատներով, տարբեր արհեստանոցներով, հաստ պարիսպների վրայ բարձրացած աշտարակներով, ծառազարդ փողոցներով, արմէնների պողոտայով, Որոնդէսի կամարակապ կամուրջով, գուարճանքի տներով եւ իրենց ստեղծագործ արարումով հարուստ բնակչութիւն: Նրանք իրագեկ էին եղեկ երկրում, Անտիոքում իշխանութեան տագնապալի վիճակի մասին: Իրենց տէրութեան Ասորիքի «Պոլիս»ներն էին ձգտել ինքնիշխանութեան, հրաժարուել հարկեր վճարել: Երկրի բանակի գէնըով, պարենով ոչ բաւարար մատակարարման հետեւանքով, նրա մարտունակութիւնն էր ընկել:

Թագաւորանիստ քաղաք Անտիոքի պալատի աւագանին էր խարդաւանքներ նիւթել թագաւորի դէմ, սաղրանքներ իրար հանդէպ: Տկարացել էր Սելեւկեան թագաւորների իշխանութիւնը: Արեւմուտքից, տարածքներ նուաճելու նկրտումներով արեւելք էր թափանցում ընչաքաղց Հռոմը: Գիտակցել էին, որ իրենց թագաւորը պիտի չկարողանար դիմակայել օտար նուաճողների յարձակումները, անկարող ապահովելու քաղաքի պաշտպանութիւնը:

Անտիոքի բնակիչները տեղեկ էին եղել Արմինայի Տիգրան Արքայի ծովերից ծով նուաճումներին, ենթակայ տիրոջթիւններում նրա վարած քաղաքականութեանը: Անտիոքիները խանդաղատանքով էին դիմաւորում արեւելքի Արքաների Արքային, տօնական տրամադրութեան խինդն էր համակել քաղաքը: Վստահ էին եղել, որ Սելեւկեան Ասորիքին նրա ստանձնելիք հովանաւորութիւնը կեանքի ապահով ընթացք, աշխատանքի ազատ արարում, բարգաւաճում պիտի բերէր իրենց քաղաքին: Անտիոքն ամբողջ արբեցել էր խինդով, իրենց աստուածների խմիչք կարմիր կրակ գինիով: Կարծես Պագոսին նուիրուած խրախճանքի հանդէսներ էին տօնախմբում:

Հապա Անտիոքի արմէնները, հապա Տիգրան Արքայի գործի հետ եկած Մեծ հայքի հարաւի լեռնական հայերը: Իրենց երկրի արեւալին տարագնեցող, հիմքայի շիւղիկներին բազմած վառուած աստղերի, դափնու կանաչ ճիւղերին լուսնեակի սպիտակ ժպիտով ցողուած ծաղիկների փնջեր գրկներին, կողովներով պտուղ, դէմքերինին դէպի արեւը չարած, գինուորական շարքերով տողանցում էին քաղաքում, գնում դէպի ամփիթատրոն:

Անտիոքիները խորը ակնածանքով էին նայում նրանց: Դարեր առաջ, իրենց հեռու աշխարհից այստեղ եկած արմէնները պահպանած էին եղել իրենց աշխարհի, իրենց արմենական ցեղի աւանդութիւնները: Երնէկ նրանց, որ մինչեւ այդ ծովի ափեր հասած իրենց Հայքերի Արքայի եւս մի թագին տիրելու տօնախմբութեան մասնակիցն էին լինելու: Ինչո՞ւ նախախնամութիւնը ինձ չէր պարգեւել տեսնելու այդ արմէնների դէմքերից հոսած հպարտանքի շողերը, այնտեղից փայլատակած հայոց աշխարհի լեռների գագաթներից պայթած կրակի լոյսը, ակներից ժայթ-

քած իրենց նահապետ Հայկի համաստեղութեան աստղերը: Ես մի շիւղը այդ արմէնների, երեւակալութեանս տեսիլքի լոյսը ճախրել է հեռուներ: Ես էլ եմ այնտեղ, քայլում եմ նրանց հետ դէպի ամփիթատրոն, պիտի քաղեմ հայոց Արքայի հայկազուն թագի արեւից շողած լոյսը, այնտեղ բազմած արծիւների խոյանքը, պիտի բերեմ այն լցնելու մեհեաններ, նրանց հրապարակներում Նաւասարդեան շուրջ պարերի շարքերին մտիր, գնա՛ քու հին աստուածների կոմմագէսէի սրբավայր, Արածանի ջրերով հոգիդ սրբիր, Հայքերի հողի պաշտպանութեան կուռին գնա: Գնանք Անտիոքի ամփիթատրոն...:

Տիգրան Արքային դէպի Անտիոքի ամփիթատրոն ուղեկցելու համար, գուռդի գինուորներն էին պալատի առաջ շարք կազմել: Պալատի հրապարակ, բիւր անտիոքցիներ էին այն շրջապատած եղել, հազարներ էլ նրան կից փողոցներում: Եկել էին, իրենց նոր տիրակալի հետ քայլելու դէպի ամփիթատրոն: Ժամանակիցը, մասնակիցն էին լինելու հեռու Արմինա լեռների աշխարհի թագաւորին Սելեւկեան աւելի քան երկու հարիւր տարիների իշխանութեան թագի փոխանցման տօնախմբութեանը:

Պալատի դռներն էին լայն բացուել, Անտիոքոս թագաւորն էր Տիգրան Արքային առաջնորդում դէպի հրապարակ: Հզօր բացականչութիւնների տարափի տակ, արեւածին Տիգրան Արքան էր բարձրացել հայոց աշխարհի նրբիւրան նժոյգին: Միտանի շայկին էր փրփրալով իրանից իջնում, լեռների գագաթներից պայթած բոցերի լոյսն էր ժայթքում կարմիր անդրավարտիքից, հայկազեան թագի սկաւառակին արեւն էր իջել, իր ոսկեհուր ճառագայթներն էր ցանում Անտիոքի վրայ:

Տիգրան Արքային կողքին, նրա բազում յաղթական մարտերի մասնակիցը, հայոց բանակի քաջազուն գորավար Բագարատն էր ձիավարում: Տիգրանի ու Բագարատի նժոյգները խորիտ քայլել էին Անտիոքի փողոցներով, վերեւ պարզած զլուխներն էին աջ ու ձախ օրօրում, կարծես ողջունում իրենց հետեւող անտիոքցիներին:

Զինուորական հանդերձանքով էր Բագարատը: Արծաթափայլ թուրն էր գօտկատեղից իջած: Իր նախնիներ, Արտաշէսեան գորավարների աղաւաղատն էր գլխին: Նրան հետեւում էին Անտիոք եկած Արքայի գունդի ջոկատների պետերը: Զրահարուրուած էին եղել: Զգաստ ձիավարում էին, կարծես մարտի էին գնալու:

Լուսնեակի դէմքով «Զրահարս» երկու աղջիկներ, սպիտակ քօղեր փռած վարսերին, երկար շրջագգեստների մէջ ընկողմանած, ոսկեայ սկուտեղ էին վերեւ պարզել: Նրա վրայ հանգում էր հարիւր, հարիւր տարիներ Սելեւկեան թագաւորների գահի խորհրդանիշ՝ ոսկեհուր, ազամանապատ թագը: Գիշերային մանրիկ աստղիկներ էին բոցկլտում նրա երեսից, առանց ժպիտի թարթում էին իրենց աշուկները:

Նրանց հետեւել էր արքունի ընտանիքը: Շքեղ էր հանդերձաւորուել թագուհի Դափնին, հոլանի թեւերի վրայ շարք, շարք ապարանջաններ, ճակատին կիսաշրջանականաձեւ ոսկէ պսակ: Նրա դէմ-

քից ժպիտ էր ճառագել, մեղամաղձոտ էր, գրկուելու էր «Թագուհի» տիտղոսից, մենաշնորհներից, պալատական խնճոյքներից: Այսուհետեւ, թագաւորական ընտանիքին շնորհուած քաղաքային մի ապարանքում պիտի բնակէր, իշխանուհի կոչուէր, թագաւոր ամուսինն էլ իշխան:

Թագաւորի շուրջն էին խմբուած եղել Անտիոքի իշխան, իշխանուհիներ: Աւագանին էր նրանց հետ: Հանգիստ քայլել էին: Վստահ էին եղել, որ պահին յարմար ճիշտ որոշում էին կայացրած եղել: Իրենց երկիրը հովանաւորող արեւելքի Արքաների Արքան ապահովութիւն էր բերելու իրենց շքեղ Անտիոք տաճարին, Ասորիքի «Պոլիս»ներին: Ժամանակի իրադրութիւնը գնահատելու իմաստուն, խելամիտ որոշում էին կայացրած եղել:

Ամփիթատրոնի գլխաւոր մուտքը, որպէս յաղթանակի պսակ, դափնի ոստերով էր կամարակապուած եղել: Նրա կանաչ տերեւների արանքներից ժպտում էին մանրիկ սպիտակ ծաղիկներ, կարծես լոյս ըմպած աստղիկներ լինէին: Անմեղ, սպիտակ լոյս էր հոսում նրանց ծաղկաբոյլերից:

Տիգրան Արքան իր շքախմբով, ամփիթատրոնի դարպասի մուտքը կամարի առաջ էր: Պարմաններ էին վազել նրան ընդառաջ: Իրենց ձեռքերից վեր պահած կողովիկներից վարդի թերթիկներ, կապոյտ մանուշակներ էին բուռ, բուռ նետել Տիգրան Արքայի գլխավերեւ, որոնք ներքեւ թափուելով, կարծես երկնքի աստղերի լոյսը, արեւի երբեքնանգ ծիածանն էր իջնում արքայի վրայ: Հայոց երկրի լեռների լանջերի, պարսքի երկրի վարդերի բուրմունքն էր վառել շրջապատը: Արքան ժպտում էր:

Ամփիթատրոնի մուտքին էր Արքան: Անտիոքի Աթենաս աստուածուհու մեհեանի քուրմն էր ընդառաջ եկել: Զգաստ կանգնած, աջ ձեռքը վերեւ բարձրացրած, ողջունել էր Արմինայի թագաւորին: Այսպէս էր դիմել Տիգրան Արքային:

- Անտիոքի հովանաւոր, գեւս աստուծոյ դուստր Աթենաս Պալլասի ողջոյնը Արմինայի Տիգրան Արքային Աստուածային իմաստութեամբ լեցուն, երկնային անմար կապուտաչեայ գեղեցիկութեամբ, գիտամբար ուղեգիր Աթենասը պատուիրել է արեւներով դիմաւորել արեւորդիների աշխարհի, քաջերի քաջ ուղեգիր Արքային, որ իր քաջերի գէնքերով հասել էր ծովեր, հասել մինչեւ այնտեղ որտեղ իրենց գէնքերը կը շողային: Աթենասը, աստուածային հովանաւորը այս շքեղ քաղաքի, կը հովանաւորի նաեւ հայոց Արքայի քաջարի գործին, գէնքին նրանց կը հոսի իր ուղեգիր յաղթանակների լոյսը: Զեք, գորավար Բագարատին, գորականների պետերին առաջնորդում են ամփիթատրոնի կեդրոնական օթեակ:

Ամփիթատրոնն էր փրփրում հաւաքուածների կանչերից, նրա քառէ որմերն էին ուժգին արձագանգում, հանդիպակաց ծովի կապոյտն էր սպիտակ փշրուում, ջրահարսերն էին ալեակները գրկած պար բռնել: Այո, այդ էս եմ որպէս «ակնաստեպատումում այս բոլորը, պատմելու ամփիթատրոնի բեմահարթակի արարումները: Այո, էս էլ

ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՅՈՒՇԱՏՕՆ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՉ



Շարունակում է իր 5-էն


Օպամային ցեղասպանության ճանաչումը, որպեսզի չի կրկնուին մարդկության դեմ գործում ինչպես նման ոճիրներ:

Օրուան պատշաճ խմբերգով ելույթ ունեցան Սահակ-Մեսրոպ եւ Ալֆրէտ ու Մարկրիթ Յովսէփեան վարժարաններու միացեալ երգչախումբի անդամները: Այնուհետեւ Սալբի Քէշիշեան երգեց «Կիլիկիա»-ն, ճանակցութեամբ ներկայ հասարակութեան:

Մանօ Ակիւլեան ներկայացուց Յովհաննէս Աճմարանեանի «Turkey Has Recognized The Armenian Genocide» գիրքը, որ ինքնին փաստա-վաւերագրական արխիւային հարուստ հաւաքածոյ մըն է ցեղասպանութիւնը ապացուցող:

Հանդիսավար Ռազմիկ Տէր Դաւիթեան յուշահանդէսի ավարտին, իր խօսքն ուղղելով թրքական իշխանութիւններուն

ըսաւ «...թող չի կարծեն որ մեր ձայնն ու տեսակէտը երթալով պիտի տկարանայ: Այլ ընդհակառակը, աւելիով պիտի գորանանք մինչեւ



որ հասնինք մեր արդար պահանջներու իրականացման»:

ԸՆԿԵՐՈՒՅԻ ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ԵԼՈՅԹԸ

Շարունակում է իր 5-էն

Ուստի, կոչ կ'ուղղենք մեր սիրելի ժողովուրդին, մասնաւորաբար Գալիֆորնիոյ մէջ ուր համախմբուած է հայութեան խոշորագոյն զանգուածը, ամէն ճիգ գործադրել միասնաբար աշխատելու, համագործակցութեան դաշտը ընդլայնելու եւ սփիւռքի զանազան վայրերէն այս գաղթօճախի մէջ համախմբուած հայ համայնքի բոլոր անդամները եւ հատուածները «հայրենիքը հզորացնելու հայրենանուէր գործին» մղելու:

- Անահանջ պայքար եւ հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման ուղղութեամբ մասնաւոր աշխատանք տանիլ ամերիկեան պետական բարձրագոյն շրջանակներու մէջ, Գոնկրէսի եւ Սպիտակ Տան մէջ Հայոց Ցեղասպանութեան հարցը մշտական օրակարգի հարց դարձնելով՝ ընդհուպ մինչեւ անոր ճանաչումը պաշտօնապէս Միացեալ Նահանգներու կողմէ:

- Միասնական ու համադրուած ջանքերով հետեւողական աշխատանք տանիլ Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու պալատի արտաքին յարաբերութիւններու յանձնաժողովի կողմէ ընդունուած թիւ 252 բանաձեւի լիազուծար նիստի մէջ արծարծուելու եւ որդեգրուելու ուղղութեամբ:

- Հայոց Ցեղասպանութեան ճանաչման պայքարի հետ գուգահեռ, միջազգային իրաւական ատեաններու մէջ մշտական օրակարգի

հարց դարձնել հայ ժողովուրդէն խլուած իրաւունքներու վերականգնումը, Թուրքիոյ բռնագրաւման տակ գտնուող մեր հողային պահանջատիրութիւնը եւ հայ ժողովուրդին տրուելիք նիւթական հատուցումը՝ այս ուղղութեամբ դիմելով նաեւ միջազգային դատարաւական բոլոր հաստատութիւններուն եւ ի պահանջել հարկին միջազգային դատարաններու մէջ դատական գործ յարուցելով Թուրք պետութեան դէմ:

Տեղին է շնորհակալութիւն յայտնել բոլոր այն երկիրներուն եւ կազմակերպութիւններուն որոնք սատար կը կանգնին մեր ժողովուրդին՝ ճանչնալով մեր դատը եւ մեր ազգային պահանջատիրութիւնը:

Միւրեւի հայեր, Մեր պայքարը կը շարունակուի միահամուռ, համայն հայութեան արդարահատուց պայքարը որ պիտի մղենք Հայաստան-Սփիւռք համատեղ ջանքերով: Թուրքիան թող չփորձէ վարկաբեկել եւ նսեմացնել մեր գործընթացը եւ մեր դատը, որովհետեւ Ապրիլ 24-ը ԿԱՅ եւ գոյութիւն ունի: Ժխտումները եւ սուտերը տեղ չունին այլեւս:

Մեր ժողովուրդի ընդհանրական շահերէն ելլելով, եկէք համահայկական ճիգերով հզորացնենք մեր միասնականութիւնը եւ ամէնուրեք եւ մշտապէս աշխարհի հանրութեան ներկայանանք որպէս «Մէկ ազգ, մէկ հայրենիք, մէկ մշակոյթ եւ մէկ դատ»:

ՄԵԼԵԿԵԱՆ ԹԱԳԻ ՅԱՆՁՆՈՒՄԸ ՏԻԳՐԱՆ ԱՐՔԱՅԻՆ

Շարունակում է իր 16-էն

եմ եղել «մշանակից»ը Անտիոքի խրախճանքի, Սելեւկեան թագի փոխանցման հպարտանքի ոգու լոյսն է հոգուս խենթութիւն ցողել: Ի՞նչ է, միայն աչո՞ք են տեսնում, հապա հոգու աչքերի շանթերի լոյսը, մտքի երեւակայութեան շողերի ալիքները չէ՞ն պատուում աներեւոյթ վարագոյրներ, չէ՞ն բացում աշխարհներ, չէ՞ն կարող բացել ցեղի պատմութեան մատենաների դռները:

Օթեակում, Տիգրան Արքայի կողքին Անտիոքոս թագաւորն էր: Այնտեղ էր ուսարբերով ու դուստրերով թագուհին: Բեմահարթակ էին մտել փողահարները, թմբակահարները: Ամփիթատրոնն էր ոտքի, հազար գոյնի շողողում էին շարքերը, փողերն էին Արմինայի զորաբանակների մարտական երգերը հնչում: Յետոյ, եւ երեւի վերջին անգամ, իրենց Սելեւկեան թագաւորութեանը ձօնուած օրհներգ էին հնչեցնում փողահարները: Ամփիթատրոնի անտիոքցիները տխուր հնչիւններով ձայնակցել էին երգին:

Անտիոքոսն էր Տիգրան Արքային ու զօրավար Բագարատին առաջնորդում բեմահարթակ: Նորէն դողում էր ամփիթատրոնը, նրա շարքերն էին օրօրում, հազար ձեռքերի ափեր վերեւ բացուած զարկում էր իրար: Միջօրէ, հայոց արիական Միհր աստուածն էր արեւը գրկած կանգնել երկնակամր, լուստտ ճառագայթներով շոյել Տիգրան Արքայի հայկազեան թագը, նրանից յորդած լյոսի հուրն էր ամփիթատրոնի շարքերին տաք ժպիտ ցանում: Երկար, սպիտակ հանդերձներով, սպիտակ շուշաններ վարսերին, ամպածին աղջիկներ՝ Չեւս աստուծոյ ինն Մուսս դուստրերը, սկուտեղ վերեւ պահած

մտել էին բեմահարթակ... Սելեւկեան թագն էր նրա վրայ, Միհրի արեւալոյսը քաղած նրա աստղիկները, պաղ ճրեմակ ժպիտ էին ցանում ամփիթատրոնի վրայ:

Անտիոքոսն էր բեմահարթակի առաջ.

- Ողջոյն արեւելքի Արքանիւր Արքայ, Արմինայի Տիգրան թագաւորին, ողջոյն հայոց զօրքի զօրավար Բագարատին, ողջ լերու:

- Անտիոքն ամբողջ տօնախմբում է իրենց մայր ոստանի, Ասորիքի Սելեւկեան թագաւորութեան հովանաւորութիւնը ընդունելու Տիգրան Արքայի բարի կամքը: Սելեւկեան պետութեան մղած երկարատեւ պատերազմները տկարացրել էին նրա ռազմական կարողականութիւնը: Անկարող էր նա իր երկիրը միայնակ պաշտպանելու արեւելքի ռազմաբեմ թափանցած Հռոմի եւ հարաւի Եփրատական Պոտոմէոսների ոտնձգութիւններից: Ասորիքի «Պոլիս»ների ինքնիշխանական նկրտումները խոչընդոտել էին պետութեան ընդհանուր կառավարումը: Արքունի եւ մի շարք «Պոլիս»ների հմատեղ գումարած ժողովը որոշում էր կայացրել դիմելու Արմինայի թագաւորին ատանձնելու համար Անտիոքի եւ Սելեւկեան ասորիքի «Պոլիս»ների ռազմակն հովանաւորութիւնը: Սելեւկեան թագաւորութեան արքութիւնքը վստահ էր, որ այն բարեազանու ու խաղաղութիւն պիտի բերէր իր երկիրն: Խոնարհաբար գիջում եմ Սելեւկեան թագաւորական տիտղոսը ու թագը: Արեւելքի Արքաների Արքայ, Արմինա երկրի աշխարհակալ թագաւոր, ընդունիր այս սկուտեղի վրայ հանգած Սելեւկեան թագաւորութեան թագը:

Շարունակելի 1

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Avenue
Pasadena, CA 91107
Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով:
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝ (626) 398-0506

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՀ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՉ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA
ՀԵՌԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680



### ԴՈԿՏ. ՅՈՎՀԱՆՆԵՍ ԱՐՄԱՐԱՆԵԱՆԻ ՆՈՐ ԳԻՐՔԻ ԵՐՐՈՐԴ ԳԻՆԵՁՕՆԸ

Մարումակուած էջ 8-էն

Փաստ, որ մինչեւ օրս ուրանում են երիցս անհիծեալ մեր թշնամիները, որոնք թուրքեր են կոչուում եւ կոչուում են ենիզերիներ:

Դոկտ. Յովհաննէս Ահմարանեանի այս նոր գիրքը անվերապահ

գնահատանքի է արժանի: Նա սիրանքի համագոր գործ է կատարել:

Վերջում խօսքը տրուեց հեղինակին: Նա վաւերական լուսապատկերներով, նոր յաւելումներ կատարեց իր գիրքի մասին: Գինեձօնն աւարտուեց հիւրասիրութեամբ:

### ՅԻՇԱՏԱԿԵԼԻ ԵՐԵԿՈՅ ՄԸ

Մարումակուած էջ 13-էն

վարձքը կատար»:

Սրահին մէջ լիշուեցաւ ներկայութիւնը նաեւ կարգ մը անձնաւորութիւններու, որոնց մէջ էր իր ապաքինման շրջանը բոլորող ծանօթ բարերար տիար Նուպար Մխարի Գէորգեանը:

Յուցադրուեցաւ վաւերագրական տեսերիւց մը (պատրաստութիւն Ռաֆայէլ Վրթանէսեանի եւ Յարութիւն Ֆօտուլեանի), որուն մէջ ներկայացուած էին Կիլիկիոյ շրջանի մեր պապեանական քաղաքներն ու յուշարձանները: Անակնկալ յայտնութիւն մը եղաւ մասնաւոր շերտիկ Անասեանի «Տուտուկի Սիմֆոնիա»ն, որ վերջերս առաջին անգամ ըլլալով ներկայացուեցաւ Վենեզուելայի մայրաքաղաք Գարապատի մէջ: Սահիկներու մեկնաբանութիւնն ու հանդիսութեան մէկ մասին վարիչն էր ծանօթ ասմունքող՝ Յարութիւն Ֆօտուլեան:

Սոյն հանդիսութեան իրենց ողջոյնի խօսքերն ուղղած է Ասատուր Կիլիկեան (Լոնտոնէն) եւ Սարգիս Սողանալեան (Ֆլորիտայէն) եւ Մարիամ Պողոսեան (Հայաստանէն):

Օրուան գեղարուեստական յայտագրին իրենց մասնակցութիւնը բերին ինքնագիր քերթուածով վարդեր Մարգարեան, երգչուհի Մաննիկ Մանուկեան եւ պատանի դաշնակահար Հայկ Գասպարեան, որ

շնորհալի եւ խոստմնալի ոյժ մըն է: Նոյնիսկ յայտնութիւն մըն էր նաեւ Անի Երեմեան «Պար Հայրենական»ը:

Տպաւորիչ եւ միանգամայն յուզիչ ու խրախուսիչ էր երբ 42 պէյլանցիներ արժանացան մեխակներու եւ յուշանուէրներու: Անոնցմէ ոմանք միութեան հիմնադիր անդամներ էին, իսկ ուրիշներ հասարակական ծանօթ գործիչներ: Յատուկ ճանաչման արժանացաւ 99-ամեայ պէյլանցի վաստակաւոր ուսուցչուհի Տիկ. Նուարդ Գասպարեան:

Ներկաներուն համար հաճելի էր ունենալ Պէյլանի բարբառով եղած կարգ մը պատմները, յատկապէս Պէյլանի պատմութեան հատորին հեղինակ Տիկ. Վիկտորի Կիլիկեանի ելոյթը:

Պէյլանի եւ մասնաւորաբար հայնահատակներու լիշատակը ոգեկոչող ելոյթով հանդէս եկաւ Ֆրեդնոյէն պատուելի Սարգիս Գնապլեան: Իսկ իր եզրափակիչ խօսքին մէջ Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեան գտնեպնդեց ներկաները կառչած մնալու մեր նախնիներու աւանդութեանց եւ կոչ ուղղեց մեզի փոխանցուած ջահը վառ պահել եւ զայն փոխանցել զալիք սերունդներուն:

Հանդիսութեան ընթացքին տեղի ունեցաւ սրտաբուխ նուիրատուութիւններ, իսկ աւարտին ճոխ հիւրասիրութիւն:

### «ՍԱՐԱԿ-ՍԵՍՐՈՊ» ԴՊՐՈՅԻ ԵՐԱԺՇՏԱՆՈՅԸ

Մարումակուած էջ 13-էն

Յուզիչ էր Ալեքսանդր Հեքիմեանի «Կոռնիկ բարով դառնաս» երգը (Լիանա Թաթեւոսեան): Խոստումնալից էին Անի Երեւանեանի, Շոդիկ Գասպարեանի, Ներսէս Ղազարեանի եւ Անի Սինանեանի ելոյթները: Աւելի քան երեսուն աշակերտներ մասնակցեցին համերգին: Գնալով մթնոլորտը աւելի էր ջերմանում: Յանկարծ համերգի միջնամասում, Սինանեան բեմ է հրաւիրում «Սահակ-Մեսրոպ» վարժարանի տնօրէն Շահէ Կարապետեանին՝ ինչ որ յայտարարութիւն անելու: Բոլորը մի պահ լարուած, ուշադիր հետեւում էին:

«Սիրելի երաժշտասէր բարեկամներ, այսօրուանից մեր դպրոցը կը կոչուի Կոմիտաս երաժշտական դպրոց», յայտարարում է Սինանեան: Այնուհետեւ Կարապետեանի հետ միասին նրանք քանդում են պատին փակցուած նկարի ժապաւէնը եւ մեր առջեւ պատկերում է հայ մեծ երգահան, յորինող Կոմի-

տաս վարդապետի լուսանկարը: Ապա ջութակի վրայ հնչում է Կոմիտասի «Ալ Այլուդ» գործը՝ մի փայլուն կատարում Անի Սինանեանի կողմէ:

Այս գեղեցիկ յայտարարութիւնը գերազույն հաճոյք պատճառեց ներկաներին: Շատերն անգամ փշաքաղուել էին: Ի հարկէ, կարծես Սահակ Պարթեւի եւ Մեսրոպ Մաշտոցի կողքին, Կոմիտաս վարդապետն էր հարկաւոր: Կոմիտասի նկարը առաւել կը պարտաւորեցնէ թէ՛ ուսուցիչներին եւ թէ՛ աշակերտներին, որ աւելի եռանդուն ու աշխատասիրութեամբ նուիրուեն երաժշտութեանը:

Վերջում, հանդիսաւոր ձեւով աշակերտներին յանձնուեցին պատուոգրեր, իսկ որոշներին՝ նաեւ մրցանակներ: Ծնողները խանդավառուած էին իրենց երեխաների ելոյթներով եւ հաւատացած, որ նման վստահելի եւ յուսալի ուսուցիչներին շնորհիւ, մի օր էլ իրենց բալիկները կը դառնան հանրաճանաչ եւ նշանաւոր երաժիշտներ՝ պարծանքը մեր հայ ժողովրդի:

### Յ.Բ.Ը.Մ. ՆՇԵՑ ԻՐ ԳՈՅԱՐՄԱՆ 104-ՐԴ ԱՍԵԱԿԸ

Մարումակուած էջ 1-էն

Հ.Բ.Ը.Մ. -ը «...պատկառելի ներկայութիւն է ափիւռքի տարածքին, նաեւ Հայաստանի մէջ»: Երկրորդը՝ «պիտի լինենք, որովհետեւ Բարեգործականը գիտէ շաղկապել երէց, միջին եւ նոր սերունդները ծրագրուած յաջողականութեամբ»: Երրորդը՝ «ու դեռ շատնանք...» որովհետեւ, «ունինք, Բարեգործականի տեսլականով խանդավառ դեկավարներ, որոնք իրենց օրինակով կ'առաջնորդեն նոր սերունդը»:

Բեմ հրաւիրուեցաւ օրուան հանդիսութեան նախագահ՝ Պրն Գառնիկ Գարայեանը, որ իր խօսքին մէջ կարեւորեց միութեանականներու միջեւ անվերապահ համագործակցութեան ստեղծումը, անհարկի զգայնութիւններէ հեռու մնալը, երկխօսութիւնը եւ ղեկավարներու կողմէ լուսաբանողական աշխատանքի ընձեռումը: Պրն Գարայեան իր ելոյթի աւարտին շնորհաւորեց Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնն ու բոլոր անդամները, անոր տարեդարձին առիթով:

Հրամցուեցաւ բարձրորակ գեղարուեստական յայտագիր մը, որուն իրենց ուշադրաւ մասնակցութիւնը բերած էին ծանօթ ասմունքող Թագուհի Արզումանեան, Յովիկ Վարդան (դաշնակ) թենոր Սուրէն

ցան կարգապահութիւն, մշակեցին մարզական ոգի, զարգացուցին թաքուն տաղանդներ եւ այլն: Յարգելի բանախօսը պատգամեց. «Ուղղել մեր աչքերը Արարատի սեզ գագաթին, եւ



մեր ականջները պահել Սրբ. Էջմիածնի զանգակներուն զօրանջին»:

Այնուհետեւ կարգացուեցաւ երախտաշատ հեղինակութիւններու գնահատականները ի փառս՝ Հ.Բ.Ը.Մ.-ին, որմէ ետք ելոյթ ունեցաւ Շրջանակայինի Ատենապետ Պրն. Պերճ Շահպագեան, որ իր երախտագիտութիւնը յայտնեց Հ.Բ.Ը. Միութեան բարեսիրական, կրթական, մշակութային եւ ընկերային ներդրումին համար հայ կեանքին ներս: Ան եզրակացուց իր խօսքը դիտել տալով, թէ Միութիւնը օրինակ պիտի հանդիսանայ ներկայ եւ զալիք սերունդներուն:

Հ.Բ.Ը.Մ.-ի Կեդրոնական վարչութեան աւուր պատշաճի խօսքը արտասանեց համառուն մարմնի անդամ Սինան Սինանեան: Ան անդրադառնալէ ետք Հ.Բ.Ը.Մ.-ի՝ Եղեռնէն ետք ծաւալած կենարար գործունէութեան վրայ, ի մէջ այլոց յատուկ լիշատակութեամբ նշեց «անոր նորագոյն նուաճումը, որ եղաւ Փասստինայի Վաչէ եւ Թամար Մանուկեաններու երկրորդական վարժարանի կեանքի կոչուիլը, շնորհիւ անոնց իշխանական բարերարութեան: Պրն. Սինանեան ապա կարգաց Հ.Բ.Ը.Մ.-ի Նախագահ Պրն Պերճ Սեդրակեանի շնորհաւորական գիրը, ուր նաեւ կը մաղթէր աշխոյժ գործունէութիւն եւ յաջողութիւն:

Հաղիսութիւնը իր աւարտին հասաւ Թեմիս Բարեջան Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի փակման խօսքով: Սրբազան Հայրը, իր գնահատական խօսքերէն ետք, եզրափակեց, Հ.Բ.Ը.Մ.-ը նմանցնելով պայծառակերպող յոյսի աղբիւրի, որ զալիք սերունդներուն պիտի փոխանցէ հայկականութեան, հայրենասիրութեան, եկեղեցապիտութեան ոգին:

Հանդիսութեանէն ետք, համալիրի բալիկն մէջ տեղի ունեցաւ ընկերային ժամ եւ հիւրասիրութիւն, իսկ Պոյաճեան սրահէն ներս արուեստի վայելք էր, ուր ցուցադրութեան դրուած էին Փասստինայի Վաչէ եւ Թամար Մանուկեան երկրորդական վարժարանի սան ասնուհիներու ձեռարուեստի իւրայատուկ գործերը՝ որոնք նուիրուած էին Օսմանեան Թուրքիոյ՝ հայոց դէմ իրագործած Յեղասպանութեան 95-ամեակին: Գնահատելի ստեղծագործութիւններ էին ցուցադրութեան դրուած գործերը, որուն համար պիտի արժէր ջերմօրէն շնորհաւորել համառուն վարժարանի մեր համբուրելի ուսանող արուեստագէտները, մաղթելով անոնց նորանոր յաջողութիւններ:



Մկրտիչեան, Սալբի Քերթնեան (սրինգ), Կարիկ Թերզեան (թաւջութակ) Միհրան Գոճեան (ջութակ), որոնք արժանացան փուռն ծափահարութիւններու:

Հանդիսութեան գլխաւոր բանախօս, գաղութիս ծանօթ ազգայիններէն Տօքթ. Գէորգ Քէշիշեան, համառոտակի կերպով կատարելէ ետք Ապրիլ 15, 1906-ին հիմնուած Միութեան հպարտաւիր լիշատակները, գնահատականը կատարեց անոր կոչումին, որ է «օգնել աշխարհի հինգ ցամաքամասերուն վրայ հաստատուած հայ ժողովուրդին ֆիզիքական, առողջապահական, կրթական, մարզական, մշակութային անսպառ կարիքներուն: Դիտել տուաւ ան, թէ «Այո՛, հ.Բ.Ը.Մ.-ը դարձած է այն անշէջ հնոցը, ուր կը կոփուին, պարտին կոփուիլ սերունդներ: Բարեգործականը այն աւագանն է, ուր հոսեցան ու կը շարունակեն հոսիլ գիտակից հայրութեան անանձնական յոյզերուն յագուրդ տուող կենսատու առուակները»: Տօքթ. Քէշիշեան անդրադարձաւ չմեռնող հայ ժողովուրդի ունեցած ազգային բարեմասնութիւններուն վրայ, ինչպէս նաեւ իր 65 տարիներու անդամակցութեան շրջանին իր Միութեանէն ստացած փորձառական կեանքին մասին: Սորվեցան սիրելի ազգը, հայրենիքը, հայ մշակույթը: Սորվե-

**ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ**  
Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկանաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ հաճեցէք կապ պահել մեզի հետ:  
G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104  
Norserount@sbcglobal.net

### ՏԻԱՐ ՅՈՎՐԱՆՆԵՍ ԳԱԼՓԱՔԵԱՆԻ ՄԱՇՈՒԱՆ ԱՌԹԻ



Խոր ցաւով տեղեկացանք մահը՝ Տիար Յովհաննէս Գալփաքեանի, որ պատահած է Ապրիլ 21, 2010-ին Սիտնի, Աւստրալիոյ մէջ, յետ երկարատեւ հիւանդութեան:

Այս տիտուր առթիւ Ս.Գ. Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմինը իր ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի այրիին՝ Տիկին Հերմինէ Գալփաքեանին, զաւկին՝ Լիբանանի Խորհրդարանի անդամ, ՍԴՀԿ Կեդրոնական Վարչութեան անդամ Տէր եւ Տիկին Ընկ. Սեպուհ Գալփաքեանին, եղբորը՝ Յունաստանի Թեմի Առաջնորդ Ոսկան Արքեպս. Գալփաքեանին եւ բոլոր հարազատներուն:

ՍԴՀԿ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՎԱՐԻՉ ՄԱՐՄԻՆ

### ԳԻՏԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ ԵՐԱՇԽԻՔՆ Է ՄԵՐ ԴԱՏԻ ՅԱՂԹԱՆԱԿԻ

Շարունակուած էջ 15-էն

ձուլթիւններին եւ միեւնոյն ժամանակ աշխատում են քայլ պահել արդի դարում արագ ընթացող առաջընթացին հետ:

Ներկայ իրադարձութիւնների հետ քայլ պահել համարում է նաեւ Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան նախաձեռնութիւնը Թուրքիայի հետ դիւանագիտական յարաբերութիւնների հաստատման առաջին քայլերը... այս հարցի մեկնաբանութիւնը թողնում ենք, սպասելով յոռաջիկայ զարգացումներին, նկատելով, որ Հայաստանի Հանրապետութեան նախագահի յայտարարութեամբ յարաբերութիւնների հարցը սառեցուել է:

Եզրափակելով՝ 95 ամեակի մեր ընդհանուր հաշուեկշռում ամենադրական եւ ամենակարեւոր երեւոյթներից մէկը, մեր ժողովուրդի մօտ նկատուող այն յատկատեսութիւնն է, գիտակցութեան բարձրացումը, որի շնորհիւ կարելի է իրագործել ազգային իսկական միասնականութիւնը, համախմբուել հայրենիքի շուրջ, մէկ ազգ, մէկ մշակոյթ, մէկ ժողովուրդ եւ ուղիղ ճանապարհով շարունակել արդի պայմանների զարգացումներին համընթաց նախամշակուած ծրագրով պայքարը՝ հայ ժողովուրդի արդարագոյն դատի յաղթանակին ի խնդիր:

### ԱԼՖՐԵՏ ՏԸ ԶԱՅԱՍ ԵՒ ԻՐ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ

Շարունակուած էջ 14-էն

Ցեղասպանութեան Ուխտի գործադրութեան բացառման վրայ: Ուստի, կ'եզրակացուէր թէ հայթուրք Հաշտեցման Յանձնախումբի դիմումին վրայ ԱԱՄԿ-ի կայացուցած եզրակացութիւնը «Հայ ժողովուրդի պատմական իրաւունքները անտեսող» (3) փաստաթուղթ մըն է: Անշուշտ այս տեսակէտը ամէն մարդ էլ բաժնէր: Կ'ըլլան կամայ թէ ակամայ խոստովանութիւններ, պատմաբան Ռիչարտ Յովհաննէսեան եւ քարաքական մեկնաբան Թաթևուհի Յակոբեան ԱԱՄԿ-ի վերոյիշեալ որոշումը Հայ-Թրքական Հաշտեցման Յանձնախումբին համար կը սեպեն «անսպասելի դրական յաջողութիւն» մը (4):

Երբ մէկ կողմէ ակներեւ ճիգ կը տարուի նսեմացնելու ԱԱՄԿի եզրակացութիւնը, միւս կողմէ կը գերփառաբանուի Ալֆրետ Տը Զայաս, որ ինչպէս ըսինք, կը գտնէր թէ ՄԱԿ-ի Ցեղասպանութեան Ուխտը ունի գործադրութեան յետադարձ ուժ: Այս պարագային ալ անտեսութեան կը մատնուի հեղինակին յառաջ քաշած մէկ այլ կարեւոր տեսակէտը: Տը Զայաս, իր աշխատութիւններուն մէջ կ'անդրադառնայ հայ ժողովուրդին հատուցում կատարելու հարցին ու կը գտնէ թէ այդ հատուցումը կը կատարուի երբ Թուրքիոյ կառավարութիւնը ներողութիւն խնդրէ, եւ իրաւունք տայ ցեղասպանութեան զոհերուն եւ անոնց զաւակներուն վերադառնալու իրենց պայեանական հայրենիքը:

Հատուցման այս առաջարկը շատ զգայուն է եւ խորքին մէջ այդ կը ծառայէ Հայ Դատ հասկացութիւնը իր բովանդակութեան պարպելուն: Այս կէտը լաւ գիտէ նաեւ Տը Զայաս, որովհետեւ իր կատարած առաջարկէն ետք ան անմիջապէս կ'աւելցնէ. «Կը կարծեմ, որ

Թուրքիոյ կառավարութեան համար շատ դրական քայլ մը պիտի ըլլայ, եթէ ան հայ ժողովուրդին առաջարկէ վերադառնալ իր հազարամեայ հայրենիքը», մենք եւս այդպէս կը կարծենք: Այս յայտարարութեան մտահոգիչ իմաստը լաւ հասկնալով է որ հաւանաբար «Ազգակ» գայն բարձրացուցած է ենթախորհրդի մակարդակին: Մէկ խօսքով, Տը Զայասի առաջարկը վտանգաւոր է եւ շատ մտահոգիչ: Այսուհանդերձ, ան կը գովերգուի որպէս Հայ Դատի Չերմ պաշտպան:

Այստեղ, Ալֆրետ Տը Զայասի կատարած առաջարկութեան բոլոր երեւներուն քննարկումը կատարել չէ մեր նպատակը: Այդ կարելի է քննարկել իր գործնապաշտ իմաստով, իրաւական-ժառանգական երեւներով, ապահովական կողմով եւսայն:

Մեր նպատակը չէ նաեւ սպառնիչ կերպով անդրադառնալ հայութեան հատուցման իրաւունքին. սա եւս նուրբ եւ զգայուն հարց մըն է:

Մեր նպատակն էր միայն ցոյց տալ որ հայութեան կենսական ու ռազմավարական շահերուն հանդէպ սկսած են յաճախ օգտագործուել երկու չափ երկու կշիռի սկզբունքը, որ կը բխի երկրորդական եւ մանր մտահոգութիւններէ, շատ հեռու՝ հարցերուն կարեւորութեան մակարդակին պահանջած սկզբունքայնութենէն, եւ կը ծառայէ բացառաբար «ներքին օգտագործման» համար:

Այս եզրակացութեան հասած ենք, որովհետեւ ԱԱՄԿ-ի եւ Տը Զայասի գուգահեռներուն վրայ չէ որ միայն այդ անսկզբունքայնութիւնը կ'երեւայ. դժբախտաբար այդ դարձած է համատարած:

Կը խոստանանք այս մասին գրել շատ աւելի հանգամանակից:

ՏՈՒՔԹ. ԵՂԻԿ ՃԵՐԷՃԵԱՆ

### ՄԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ

1. Շաւարշ Թորիկեան, «Հայկական Հարցը եւ Միջազգային Օրէնքը», Պէյրութ, 1976
2. «Ազգակ», 2004 Նոր Տարուան Վացառիկ, «Հայ-Թրքական Յարաբերութիւններու Արագընթաց Զարգացման Տարին»: Նաեւ «Երկիր» 2003 Յուլիս 4-10, «Հայոց Ցեղասպանութեան Պարագայում ՄԱԿ-ի Բանաձեւը Կիրառելի է»:
3. «Ազգակ» 2003 Յուլիս 14, «Էսէմպլիական Անպարկեշտութիւն», Խաժակ Մկրտիչեան:
4. «Ազգակ», 2009 Մայիս 4, «ՊատմաՎանքերի Համատեղ Յանձնաժողովը Համարում Եմ Վտանգաւոր Թակարդ», Թ. Յակոբեանի հարցազրոյցը Ռ. Յովհաննէսեանի հետ:
5. «Ազգակ», 2003 Սեպտեմբեր 12, «Միջազգային Իրաւագէտ Ալֆրետ Տը Զայաս Շեշտեց Թուրքիոյ Պատասխանատուութիւնը», Արիս Պապիկեան:

### ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ

PALM SPRINGS ԱՐՉԱԿՈՒՐԴԻ ԳԼԱՑՈՂ ԳԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱՂՈՒԹԵԱՆ

Փալմ Սփրինգս գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, քարուզի, թեմիսի խաղաղաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

Մանրամասների համար հեռաձայնել՝ (818) 246-0125

Վարձման գներն են՝	
Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝	\$ 400
Long Weekend-ների համար՝	\$ 500
Մէկ շաբաթուայ համար՝	\$ 675
Մէկ ամսուայ համար՝	\$ 1450

### REQUEST FOR PROPOSALS (RFP# 7531) AGENCY WIDE INTERNAL RISK ASSESSMENT AUDIT


The Housing Authority of the City of Los Angeles invites proposals from qualified firms to assess the effectiveness of risk management, controls and governance processes within its departments and programs. Copies of the RFP may be obtained beginning April 12, 2010 online at www.hacla.org/ps. Proposals will be accepted until 2:00 P.M., May 7, 2010, at 2600 Wilshire Blvd, #3100, Los Angeles, CA 90057. 4/22, 4/29/10 CNS-1838341# MASSIS WEEKLY

**ՔԱՉ ՆԱԶԱՐ ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ Ամէն Կիրակի երեկոյեան ժամը 10:00-ից 12:30 Կլէմէնտի 280-րդ կայանից**

ArmenienInfo.net

News. Informationen. Kommentare.

www.massisweekly.com



Photos by Garine Bekarian and Tamar Babisian-Khatchadourian